



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17212

Y. Tinker

1874

369
u-23

ՀԱՄԱՐ ԳԻՈՐԳ ՌԵՏՍՊՈՒՆԻՏԻՆԻ Կ. ԿՈՆՍՏԱՆՍ  
Printed in Turkey

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՎԱՆՕՐԷԻՑ ԽՈՐՀՐԳՈՅ

1872-1874 ԱՄԻ



1731

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

2010

369  
Ա-23

2007

8857

Printed in Turkey

5

369

4-93

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՎԱՆՕՐԷԻՑ ԽՈՐՀՐԳՈՅ

1872-1874 Ա.Մ.Ի.Ն

Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Վանօրէից խորհուրդը Ս. Պատրիարք Հօր հրաւիրագրոյն իր առաջին նիստը կազմեց 27 յուլիս 1872 ի Խորհրդարանն Ղալաթիոյ, յորմէ սկսեալ իր նիստերը շարունակեց մինչեւ 1874 յունիս 11 :

Այս պաշտօնավարութեան երկամեայ շրջանին մէջ Վ. Խորհուրդս ԿԸ. նիստ կազմած է, Վարչութեան անցեալ տաքնապալից վիճակին մէջ մասամբ իւրիք անդործութեան ենթարկուած ըլլալովն հանդերձ :

Վանօրէից խորհուրդս իրմէ առաջ կազմեալ Վանական խորհրդոց պաշտօնավարութեան տեղեկագրերը չունենալով, եւ մանաւանդ չ'զիտնալով թէ, Թուրքաստանի Հայաբնակ վիճակաց մէջ որչափ Ազգային վանքեր կան. որոնք միաբանութիւն, վանահայր, վարժարան, ընծայարան եւ այլն ունին. որչափ հող, շարժական եւ անշարժ կալուածներ ու եկամուտներ ունին, եւ թէ անոնց մատակարարութիւնը որոնց ձեռքն է եւ առ ինչ կը մատակարարուին. այս գլխաւոր տեղեկութեանց կարօտ վիճակին մէջ փութաց 1872 յուլիս 27 եւ 72 սեպտեմբեր 15 կրկնակի պաշտօնազրկելով ազգային Քաղաքական ժողովոյ անանջարկել եւ խնդրել

Ա. Տաճկաստանի ազգային վանօրէից ցուցակը :

Բ. Նախորդ Վանական խորհուրդներէն Պատ-

րիարքարանի դիւանատան մէջ մնացած արձանագրութիւնները :

Գ. Գլխաւոր վանօրէից կանոնագրութիւնները :

Ազգային դիւանատունէն միայն նախորդ Վարչութեան օրով 20-21 վանօրէից վիճակագրական տեղեկագրերն, եւ Ս. Երուսաղիմաց Վանուց համար ազգային Հնդհանուր ժողովով հաստատեալ կանոնագիրը կրցաւ ստանալ :

Բ.

ՅԱՆԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՆՕՐԷԻՑ

ՎԱՐՃԱՐԱՆԱՅ ԽՆԳԻՐ, ԵՒ ՀՐԱՀԱՆԳ ՎԱՆՕՐԷԻՑ

Վանօրէից խորհուրդս փութաց նախ ընդհանուր վանօրէից ցանկը պատրաստել .

Երկրորդ՝ իրիւ անհրաժեշտ պէտք՝ հետեւեալ 17 վանօրէից մէջ վարժարան բանալ տալու անօրէնութիւնն ըրաւ, որք են

- |               |                |
|---------------|----------------|
| 1. Կեսարիոյ   | Ս. Կարապետ     |
| 2. Գաղատիոյ   | Ս. Աստուածածին |
| 3. Սեբաստիոյ  | Ս. Նշան        |
| 4. Մարզուանու | Ս. Աստուածածին |
| 5. Պայազխու   | Ս. Յովնաննէս   |
| 6. Արղնու     | Ս. Աստուածածին |

6392 39



- 7. Մշոյ Ս. Առաքելոց
- 8. Վանայ Ս. Աբանչելագործ
- 9. Աղթամարայ Ս. Խաչ
- 10. Եւգոնիոյ Ս. Յովհան
- 11. Տիվիկի Ս. Լուսաւորիչ
- 12. Մանջրլի Ս. Թորոս
- 15. Խարբերդու Գուլէ վանք
- 14. Երզնկայու Ս. Ներսէս
- 15. Շապանդարահիսարու կամ Թամպարայի Ս. Գէորգ
- 16. Աղբակու Ս. Բարթուղիմէոս
- 17. Կարնոյ Վանօրէից մին.

Երրորդ՝ ըստ յանձնարարութեան Կրօնական եւ Քաղաքական Խառն ժողովոյ, ձեռնարկեց պատրաստել վանօրէից Հրահանգը. զոր քննութեան առնուով Խառն ժողովը՝ վաւերացուց, եւ օրինակը հրատարակեալ ըլլալով, աւելորդ է հոս դնել:

Յիշեալ վանօրէից Հրահանգը Կեդրոնական Վարչութեան կողմանէ իւրաքանչիւր վանօրէից զրկուելուն վրայ՝ Խորհուրդս 10 ապրիլ 1875 թիւ 26, եւ 30 յունիս 1875 թիւ 47, հետզհետէ երկու օրինակ շրջաբերականներ հանեց Թուրքաստանի ընդհանուր վանօրէից միաբանութեանց ուղղեալ, ծանուցանելով որ

1. Նոյն Հրահանգին համաձայն վանական միաբանութիւնը իր ընդհանուր ժողովն կազմէ, եւ Տնօրէն խորհուրդն ընտրելով՝ տեղեկագրէ առ Կեդրոնական Վարչութիւն ի վաւերացումն:

2. Իւրաքանչիւր վանքի միաբանից, դպրոցի աշակերտաց եւ այլն ցուցակը պատրաստելով ուղարկէ առ Կեդրոնական Վարչութիւնն:

3. Երկրորդ շրջաբերականին հետ տպագրուեալ վիճակացոյցեր զրկուելով՝ իւրաքանչիւր վանօրէից շարժական եւ անշարժ կալուածոց, հասութից, գոյից ու կենդանեաց, նաեւ միամեայ հաշուոց մանրամասն տեղեկագրութիւնը պահանջեց. ծանուցանելով որ ազգային վանքերէն որոնց որ հողային կալուածները տիրոջ կառավարութեան օրինաց համեմատ ըստ երկրի գրքի ձեռնարկէ, փութան ըստ օրինի անմիջապէս ըստ ընել:

Խորհուրդս յիշեալ կրկնակի շրջաբերականաց ըստ արժանոյն պատասխան՝ բացի քանի մը վանքերէ, մնացեալներէն ստացած չըլլալով, մինչեւ 1874 յունվար 12. գանգատ ըրաւ առ Քաղաքական ժողովն, յորմէ զկնի իր երրորդ, թիւ 129 1 փետրվար 1874 շրջաբերականը հա-

նեց իբրեւ վերջին ազդարարագիր առ ընդհանուր վանօրայս, եւ նախորդ շրջաբերականաց պատասխաններն պահանջեց:

Խորհուրդս ցաւօք սրտի պարտաւորուած է ըսել, թէ վերջին ազդարարագիրն ալ ցարդ անպատասխանի մնաց վանական միաբանութեանց մեծագոյն մասին կողմէն. եւ ուշադրութեան առնուով այս անհոգութիւնը, թէ ասոնց դարման եւ թէ ընդհանուր վանօրէից անբարեկարգութեանց եւ գեղձմանց բարձման մասին տեղեկագրեց առ Քաղաքական ժողովն 1874 մայիս 21 գրութեամբ:

Գիտէր Վանօրէից խորհուրդն՝ թէ երկար ժամանակէ ի վեր ինքնագլուխ կառավարուած վանական միաբանութիւնները զիւրաւ գլուխ պիտի չծռէին Կեդրոնական Վարչութեան պահանջմանցը, մանաւանդ որ, շատերը թերեւս կ'սպասէին տեսնել՝ թէ վանօրէից վիճակը կըրկրտող այս ընթացքին հետեւանքն ինչ պիտի ըլլայ, եւ ի հարկէ Կեդրոնական Վարչութեան վերջին տագնապն ալ անոնց վանդաւորութեանցը թիւ ուժ չ'տուաւ: Այս պատճառներով ստէպ ստէպ յորդորական եւ սպառնական շրջաբերականներ հանելէն զատ Խորհուրդս ուրիշ բան չըրաւ առաջին անգամին համար. մինչդեռ ասկէ ետքը վանօրէից Հրահանգին համաձայն խտուրթեամբ կրնայ վարուիլ զանցառու վանահարց եւ միաբանութեանց հետ:

Իսկ այն վանահարք եւ միաբանութիւնք՝ որ Խորհուրդոյ շրջաբերականաց համեմատ պատասխանած են, ինչպէս պիտի տեսնուին համարատուութեան մէջ, գէթ այս մասին գոհունակութեան արժանի կը համարուին. զի այս յարաբերութեան շնորհիւ հետզհետէ կարելի պիտի ըլլայ Ազգին բաղձանաց եւ Սահմանադրութեան պահանջման համաձայն բարեկարգել վանքերը յօգուտ Ազգին:

Վարժարան բանալու համար 17 վանօրէից զրկուած շրջաբերականներուն հետեւեալ պատասխանագրերն ստացանք:

Կեօթէ. — Ս. Կարապետի վանից վանահայր Եղիա վարդապետ 1872 նոյեմբեր 17 թիւ նամակաւ Կեդրոնական Վարչութեան ծանուցագրոյն ի պատասխան կը յայտնէր թէ՛ արդէն

վանուց մէջ վարժարան բացուած էր հմուտ դասատուի մը տեսչութեան ներքեւ, եւ յորում երեք կարգի բաժանեալ 14 մանկաիք վանուց թեմի դիւղերէն՝ հաւաքեալ ձրիաբար կը դաստիարակուին, եւ կուսանին:

- Քրիստոնէական վարդապետութիւն .
- Հայկաբանութիւն (իր ամէն ճիւղերովը) .
- Աշխարհագրութիւն .
- Թուաբանութիւն .
- Ազգային պատմութիւն .
- Տաճկերէն .
- Եկեղեցական երգեցողութիւն :

Սեփարթ. — Առաջնորդ Պետրոս վարդապետ 1875 մայիս 8 թիւ 599 նամակաւ կը պատասխանէր թէ Սեբաստիա վերադառնալուն (նոյն ատեն Կեդր. վարչութեան որոշմամբը Ամասիա կը գտնուէր) պարտ ու պատշաճն գործադրելով պիտի տեղեկագրէ. թէ եւ մինչեւ ցարդ Սեբաստիա վերադարձած ըլլալով, խոստացած տեղեկագիրը չ'ղրկեց:

Պայրէ. — Ս. Յովհաննէս վանուց Միաբանութիւնը 1875 մայիս 28 թիւ 1-5 կրկնակի գրութիւններով ազգային Վարչութեան եւ Վանօրէից խորհրդէն զրկուած պաշտօնագրերը ըստանալով զործադրած ըլլալը կը ծանուցանէր, յայտնելով թէ վանքին մէջ 24 մանկանց համար ժառանգաւորաց դպրոց մը բացած է, որոնցմէ 14ը գիշերօթիկ եւ 10ը երթեւեկ է, եւ կուսանին:

- Ընթերցանութիւն .
- Ազգային եւ Ս. Գրոց պատմութիւն ,
- Թուաբանութիւն .
- Քերականութիւն .
- Եկեղ. երգեցողութիւն :

Խարբերդ. — Առաջնորդական տեղապահ Պետրոս վարդապետ նամակաւ մի կը յայտնէր թէ Խարբերդու վանօրէից եւ ոչ մին միաբանութիւն եւ դպրոց չունենալով անօրէնութեան կը կարօտին. որուն պատասխան գրեցաւ յիշեցնելով որ Վարչութեան եւ Վանօրէից խորհրդոյ կողմէն առ ինքն զրկուած պաշտօնագրերուն պատասխանել փութայ գործադրութեամբ հանդերձ:

Երզնկայ. — Ս. Չարչարանաց վանուց վանահայր Տ. Գեւորդ քահանայն վանուց մէջ 7

տղայոց համար գիշերօթիկ վարժարան մը բացած ըլլալը կը ծանուցանէր. զոր հաւաքած էր վանքին հինգ թեմական գիւղերէն, եւ որոց կաւանդուին

- Կրօնագիտութիւն .
- Քերականութիւն .
- Թուաբանութիւն .
- Ազգային պատմութիւն .
- Տաճկերէն .
- Եկեղեցական երգեցողութիւն :

Երզնկայու Ս. Ներսիսի վանուց մէջ վարժարան բանալու համար ազգ. Վարչութեան եւ Վանօրէից խորհրդոյ կողմանէ հրահանգ զրկուած էր Վանահօր, որ ցարդ անտարբեր կեցած է. մինչդեռ Ս. Չարչարանաց վանքը՝ որ Ս. Ներսէսի վանքէն նուազ կարողութեան տէր է, ինքնաբերաբար վարժարան բացեր է:

Յիշեալ 17 վանքերէն միայն 5ը դպրոց բացած եւ 2ն ալ գէթ պատասխան մը զրկած են, իսկ միւսները մինչեւ այսօր եւ ոչ իսկ պատասխանելու յօժարած են: Տարակոյս չ'կայ թէ Վանօրէից խորհուրդն իր յաջորդ շրջանին մէջ այդ զանցառու վանօրէից հետ բարեկարգութեան Հրահանգին համաձայն պիտի վարուի. մինչեւ որ անոնց հաշիւները չ'տեսնէ եւ չ'համոզուի թէ գէթ 10ը տղայոց համար վարժարան մը բանալու անկարող են, անոնց օձկքը չ'պիտի թողու:

Վանօրէից խորհուրդը նկատելով որ ազգային վանօրէից մէջ միայն Ս. Երուսաղէմի եւ Արմաշու վանքերն են, որ կանոնաւոր վարժարան ունին իրենց մէջ, միւս 17 վանօրէից վարժարան բանալու համար տուած որոշմանը հետ արժան դատեց Քաղաքական ժողովոյ հաւանութեամբ՝ հետեւեալ 3 վանքերուն 14 մարտ 1875 գրել, որ կամ ի Ս. Երուսաղէմ կամ յԱրմաշ իրենց վանուց անտուկին ծախքովը մէյմէկ յաջողակ աշակերտ զրկին յուսումն եւ ի կրթութիւն. որպէս զի անոնք իրենց վերադարձին կարենան նոյն վանօրէից վարժարանաց մէջ դասախօսել եւ առած կրթութիւններն ծաւալել:

- Ահաւասիկ որոշեալ վանքերը
- 1. Աղթամարայ Ս. Խաչ .
- 2. Սեբաստիոյ Ս. Նշան .
- 3. Կեսարիոյ Ս. Կարապետ .

- 4. Մարդուանու Ս. Աստուածածին .
- 5. Եւզովիոյ Ս. Յովնան .
- 6. Կարնոյ վանքերէն մին .
- 7. Գաղատիոյ Ս. Աստուածածին .
- 8. Արդնու Ս. Աստուածածին :

Ասոնց եւ ոչ մէկէն պատասխան ընդունած չէ, բաց 'ի Կարինէն, որ կը գիտէր թէ վիճակին վանօրէից աղքատութեանը պատճառաւ կարող չէ այդպիսի առաջարկութիւն մը առայժմ ընդունիլ :

Վանօրէից խորհուրդն ասոնց չպատասխանելուն մասին որ եւ է դիտողութիւն մը չունէր ընել . (ի հարկէ ըստ որոշմանն կրկին եւ կրկին ազգարարութիւն ընելէ չ'պիտի դադրի), սա միայն կը յաւելու թէ՛ Արմաշու վանուց վարժարանին մէջ ձրի դաստիարակուելու համար Գաղաքական ժողովոյ հաւանութեամբ 10 աշակերտ տալ որոշուած ըլլալով՝

Սղերդէն	2
Խարբերդէն	2
Գերձանէն	1
Արճէչէն	1
Քղիէն	1
Կիլիկիոյ վիճակներէն	5

այս մասին ալ յիշեալ վիճակներէն պատասխան չ'կրնալով առնուլ, Վանօրէից խորհուրդը պարտաւորեցաւ ի Պօլիս գտնուած հետեւեալ 7 գաւառացի տղաքներն ինքն ընտրել եւ զրկել յԱրմաշ .

- 1. Նշան Կարապետ Ֆիթիլեան Շ. Ղարահիսարցի 11 տարեկան
- 2. Յարութիւն Մեղքօնեան Խուլաիկցի (Բաղէշ) 11 տարեկան
- 3. Գասպար Մեղքօնեան Վանեցի 11 տարեկ.
- 4. Մինաս Զաքարեան Երզնկայի Տանձիկ գիւղէն 12 տարեկան
- 5. Խաչատուր Նիկողոսեան Կէմ գիւղցի (Վասպուրական) 11 տարեկան
- 6. Նշան Յարութիւն Երզնկացի 12 տարեկ.
- 7. Աստուածատուր Մեսրոպեան Խարբերդցի 14 տարեկան

Ասոնք Արմաշու վանուց վարժարանին մէջ այժմ կը դաստիարակուին ձրիաբար . բաց ի Գասպար Մեղքօնեան Վանեցի եւ Նշան Յարութիւնեան Երզնկացի անուն տղայքներէն, զորս յիշեալ վարժարանին տեսչութիւնը ուսման ան-

բաւական համարելով՝ յետ 8 ամսոց արձակած էր, եւ Խորհուրդս նոր ընտրութիւնը Սղերդի վիճակէն ընելու համար գրեց Սղերդի Առաջնորդին, որ աշխոյժ եւ ուսումնատենջ երկու աղքատ պատանի ընտրէ եւ զրկէ ի Պօլիս . որոյ պատասխանը ցարդ հասած չէ :



**Գ.**

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՋԱՐՑ**

Վանական միաբանութեանց կողմէն ընտրուեալ եւ Կեդրոնական վարչութեան Խառն ժողովէն վաւերացեալ վանահարք են .

- 1. Տ. Խորէն Կպիսկ. Արմաշու վանուց համար
- 2. Տ. Մամբրէ » Մշոյ Ս. Կար. վանուց հմբ.

Իսկ այն վանքերուն համար, որ միաբանութիւն չ'ունէին կամ առաջնորդութեան հետ միացեալ ըլլալով՝ առանձին վանահայր չունէին, Վ. Խորհուրդն ըստ Հրահանգին վարուելով, ասոնց առաջնորդութենէ բաժանումը կարեւոր եւ օգտակար համարելով, վանահայրութեան յարմար վարդապետներ առաջարկեց վարչութեան Խառն ժողովոյն, որն որ ընդունելով յիշեալ բաժանումը, նոյն վանօրէից վանահայրները կարգեց . ինչպէս են ,

- 1. Գաղատիոյ Ս. Աստուածածնայ վանքը առաջնորդութենէն բաժնելով, վանահայր ընտրուեցաւ Տիմոթէոս վարդապետ Սափրիչեան . բայց սա անմիջապէս հրաժարեցաւ, եւ մինչեւ ցարդ ուրիշի մը ընտրութիւնն առ կախ մնաց :
- 2. Եւզովիոյ Ս. Յովակիմ Աննայի վանքն ալ նմանապէս բաժնելով առաջնորդութենէն, վանահայր ընտրուեցաւ Կարապետ վարդապետ Բազրատունի, որ յետ 2-3 ամսոց հրաժարեցաւ, դանդաթելով տեղւոյն մէկ քանի անձանց գէմ, եւ նոր ընտրութիւնն առ կախ մնաց :
- 3. Ակնայ Ս. Փրկչայ վանքն ալ նմանապէս բաժնելով առաջնորդութենէն, վանահայր ընտրուեցաւ Գանիէլ վարդապետ Գրիգորեան :
- 4. Կարնոյ Խաչկայ վանքը նմանապէս Առաջնորդութենէն բաժնելով, վանահայր ընտրուեցաւ Կարնեցի Ներսէս վարդապետ :
- 5. Սղերդու Կոնոնոսի վանուց վանահայր ընտրուեցաւ Ղանգանցի Խաչատուր վարդապետն ըստ ինքզնուց թեմական ժողովրդեան, պաշ-

տօնանկ ընելով Աբրահամ վարդապետը, որոյ դէմ ծանր գանդաւաներ կային :

6. Երզնկայի Ս. Գէորգայ վանուց վանահայր ընտրուեցաւ Մելիտոս քահանայն . պաշտօնանկ ընելով Համադասպ քահանայն ըստ առաջարկութեան Երզնկայի Գաւառական վարչութեան :

7. Մարդուանու Ս. Աստուածածին վանուց վանահայր ընտրուեցաւ Արմաշու նախկին միաբան Խօլտամեան Պօզոս վարդապետը :

Իսկ Վ. Խորհրդոյս կողմէ առաջարկուած եւ Վարչութենէն դեռ չ'վաւերացած վանահայրութիւններն են .

Թամղարայի Ս. Գէորգայ վանուց վանահայր առաջարկուեցաւ վանեցի Տ. Մարգիսեան Ստեփան վարդապետը, ըստ ինքզնուց թեմական ժողովրդեան եւ տեղւոյն Թաղ. Խորհրդոյն . սակայն Շապան Ղարահիսարու Առաջնորդին դիտողութեանը վրայ ընտրութեան վաւերացումն առ կախ մնաց :

Նոյնպէս Մշոյ Ս. Յովնանու վանուց վանահոր հրաժարման վրայ, նոր Վանահոր ընտրութեան տեղեկագիրը մատուցուած է Ազգային վարչութեան :

**Գ.**

Վանօրէից Հրահանգին համաձայն հետեւեալ վանօրէից Տնօրէն խորհուրդները վաւերացան Խորհրդոյս կողմէն .

1. ԱՐՄԱՇ. — Միաբանական Ընդհանուր ժողովը իւր 1 մայիս 1875 տեղեկագրով Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը կը ծանուցանէր . զոր ի նիստ Ե՛. Խորհուրդս վաւերացուց :

2. ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏ. — Միաբանական Ընդհանուր ժողովը 15 ապրիլ 1875 տեղեկագրով Տնօրէն Խորհրդոյ ընտրութիւնը կը ծանուցանէր . զոր ի նիստ Ե՛. 22 մայիս 1875 Խորհուրդս վաւերացուց :

3. ԼԻՄ ԱՆԱՊԵՏ Ի ՎԱՆ. — Միաբանական Ընդհանուր ժողովը 30 ապրիլ 1875 տեղեկագրով Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը կը ծանուցանէր . զոր ի նիստ ԻՍ. 19 յունիս 1875 Խորհուրդս վաւերացուց . դուրս թողլով ընտրելոց ցանկէն Թագէոս վարդապետը, որ ընծայից Ս. Աստուածածնայ վանուց վանահայր էր :

4. ՄՇՈՅ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ. — Միաբանական Ընդհանուր ժողովը 22 մայիս 1875 տեղեկագրով Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը կը ծանուցանէր . զոր ի նիստ Ի՛. 15 յուլիս 1875 Խորհուրդս վաւերացուց :

5. ՄԵՄՈՓԱՅ ՎԱՆՔ Ի ՎԱՆ. — Միաբանական Ընդհանուր ժողովը 20 մայիս 1875 տեղեկագրով Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը կը ծանուցանէր . զոր ի նիստ Լ. 28 օգոստոս 1875 Խորհուրդս վաւերացուց :

6. ԵՐԵՔ ԽՈՐԱՆ Ի ՊԱՅԱՉԻՏ. — Միաբանական Ընդհանուր ժողովը 28 մայիս 1875 տեղեկագրով կը ծանուցանէր Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը . զոր ի նիստ Լ. 28 օգոստոս 1875 Խորհուրդս վաւերացուց :

7. Ս. ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ՅԵՐԶՆԿԱՅ. — Վանահայր Տ. Ղեւոնդ քահանայն 29 յուլիս 1875 տեղեկագրին միջոցաւ վանքը միաբան վարդապետ չունենալը ծանուցանելով, թեմականաց որոշմամբ արդէն կազմուած հինգ աշխարհական անձինքներէ բաղկացեալ վանուց Հոգաբարձութիւնը իրրեւ Տնօրէն խորհուրդ կը ներկայացնէր ի վաւերացումն :

Վանօրէից խորհուրդն ի նիստ Լ. 28 օգոստոս 1875 Սահմանադրական Հրահանգին հակառակ գտնելով սոյն ընտրութիւնը, չ'վաւերացուց . եւ իր 69 համար 11 սեպտ. 1875 պաշտօնադրով յիշեալ վանուց տեսչութիւնը (առ ժամ) գաւառին Վարչութեան յանձնելով, ասոր վիճակին վրայ տեղեկութիւն պահանջեց :

8. ԱՂԱՄԱՐԱՅ ՎԱՆՔ. — Միաբանական Ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ Երեւ միա եպիսկոպոսին, Տնօրէն խորհուրդն ընտրելով 5 յուլիս 1875 տեղեկագրով կը ծանուցանէր ի վաւերացումն . բայց նոյն միաբանութեան մեծագոյն մասին բողոքին վրայ, ի նիստ Զ. 11 սեպտ. 1875 Վ. Խորհուրդս անվաւեր համարեց նոյն ընտրութիւնը, եւ յայտադրեց վարչութեան 30 դեկտ. 1875, եւ նոր ընտրութեան համար հրահանգ ինդրեց :

9. Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՅԵՐԶՆԿԱՅ. — Երզնկայոյ կրօն. եւ Քաղ. Խառն ժողովը 1875 վեարվար 16 ին Ս. Լուսաւորիչ վանուց միաբանութիւն չունենալը ծանուցանելով, հինգ աշխարհական անձինքներէ Հոգաբարձութիւն մը ընտրած ըլլալը կը յայտադրէր . զոր ի նիստ ԵՍ. 1 մարտ 1875 նկատողութեան առկով Խորհուրդս դիտեց, որ ըստ Հրահանգի նոյն օրինակ վանօրէից (ս-

բոց նիւթական վիճակն անբաւական է միա- բանութիւն ունենալու) տեսչութիւնը տեղական գաւառային վարչութեանց իրաւասութեան տակ ըլլալով՝ անոնց պատասխանատուութեան ներ- քեւ կիցնան նաեւ նոյն օրինակ վանօրէից տես- չութիւնքը . այսպէս պատասխանելով իրենց , վանքին բարւոք մատակարարութիւնը պատ- ուիրեց 1875 մարտ 6 գրութեամբ :

Ե.

ՀԱՇՒԻՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՆՕՐԷԻՑ

Վանօրէից խորհրդոյ պաշտօնն ըլլալով իւ- րաքանչիւր վանուց մատակարարութեան հա- չիւնեը քննել եւ ստուգել . թէեւ իր պաշտօ- նավարութեան օրէն սկսեալ հետզհետէ ընդ- հանուր վանօրէից ուղղեալ չըջարեականներով իւրաքանչիւր վանուց ելմտական հաշուոց եւ նոցա մատակարարութեանց վրայ տեղեկութիւն լինողք էր , եւ մէկ քանիէն միայն պատաս- խան ընդունած , որ յետոյ պիտի տեսնուին . սակայն հաշուոց մասին ստիպողականութիւն տալով ինչպէս որ իւր պարտաւորութիւնն էր ի նիստ ԽԵ. 3 փետրվար 1874 առ ժամս հետեւ- եալ 15 վանօրէից չըջարեական հանեց եւ հը- բաւիրեց զանոնք համար տալու :

Table with 3 columns: No., Name, and Status. Lists 15 items related to the Van Diocese.

յորոց ցայսօր պատասխան իսկ առնուած չէ :

Զ.

1. - Ս. ԵՐՈՒՍԱԳԵՄՈՑ ՎԱՆՔ

Երուսաղիմայ Ս. Պատրիարք Հայրն վանուց ընթացքին եւ վարժարանին վրայ հանդերձ նա- մակաւ յատուկ տեղեկագրեր զրկած ըլլալով , զանոնք հոս կ'օրինակենք .

« Ամենապատիւ Սրբազան եղբայր Ի Քրիստոս . « Զեր Սրբազնութեան Սեպ. 2 եւ 116 թիւ նամակաւ պահանջած ժառանգաւորաց ուսում- նարանի եօթնամսեայ չըջանի տեղեկագիրը ա- հաւաստիկ ներփակեալ կը զրկեմք , ուր պիտի տեսնուի Հրահանգին համեմատ նշանակեալ ա- շակերտաց թիւը , որ տեղացի ըլլալին , երբ գալերնին , ոմանց որչափ ժամանակ մնալը , շա- տերուն արձակուիլը , ոմանց ելնելը , աւան- դուած ուսմունքները , ուսուցչաց թիւը եւ ոյք ըլլալնին : Ընդ նմին Ս. Աթոռոյս ներկայ Ուսում- նական խորհրդոյն պատրաստած դպրոցին եօթ- նամսեայ չըջանի մէջ աւանդուելիք ուսմանց ծրագիրն տպեալ . դարձեալ համաօտ տեղե- կութիւն մի քաղաքիս մանչ եւ աղջիկ տղայոց դպրոցներուն վիճակի մասին : Կը փութամք յայնանել որ թէ ժառանգաւորաց ուսումնարանի եւ թէ քաղաքիս երկսեռ դպրոցաց բոլոր ծախ- սը Ս. Աթոռս կը հողայ , որ միացած է վանքի հաշւոյն հետ , որ արդէն պատրաստուած ըլլա- լով միաբանութեան Ընդհանուր ժողովոյն յանձ- նուած է , եւ քիչ օրէն կը լրանայ . զայն ալ կը տեսնաք » :

4 Նոյ. 1872 Ողջ լերուք Ի Տէր Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի ՊԱՏՐԻԱՐԿ ԵՍԱՅԻ ԱՐԵՊՈՍԿՈՊՈՑ

ԱՆՈՒԱՆՔ ԶՐԻԱԹՈՇԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՅ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՒԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ ԵՐՈՒՍԱԳԵՄԻ

- 1. Գէորգ Սարգիսեան Արաբկերցի
2. Կարապետ Տ. Յովհաննէսեան Թրակացի
3. Կարապետ Թովմասեան Չանաքքալէցի
4. Թաղուոր Գրիգորեան Անդրիանուպօլսեցի
5. Գէորգ Տ. Յարութիւնեան Խամայեցի
6. Գարրիէլ Պօղոսեան Եգիպտացի
7. Կարապետ Մկրտիչեան Եւզոկիացի
8. Պօղոս Յակոբեան Չանաքքալէցի
9. Սարգիս Ստեփանեան Թալասցի
10. Պետրոս Պետրոսեան Տիգրանակերտցի
11. Աւետիս Կարապետեան Կ. Պօլսեցի
12. Յովհաննէս Խաչատուրեան Մալաթիացի
13. Խաչատուր Ստեփանեան Մէլիմէնցի
14. Գրիգոր Կիրակոսեան Ատանացի
15. Յակոբ Աւետիսեան Մանիսացի
16. Յարութիւն Սահակեան Վանեցի
17. Աթանաս Առաքելեան Շամախեցի
18. Յակոբ Յովհաննէսեան Սեբաստացի

- 19. Պօղոս Կարապետեան Գամասկոցի
20. Սարգիս » »
21. Գէորգ Ներսէսեան Անթէպցի
22. Յարութիւն Յակովբեան Ուլնեցի
23. Մարտիրոս Տ. Կարապետեան Ֆուրնուզցի
24. Կարապետ Յովհաննէսեան »
25. Սարգիս Աստուածատուրեան Ուլնեցի
26. Խաչատուր Խաչատուրեան »
27. Մանուկ Զգօնեան »
28. Սմբատ Տ. Ղաղարոսեան »
29. Մկրտիչ Գըլըճեան Ալպիսթանցի
30. Պաղտասար Աւետիսեան »
31. Կարապետ Գրիգորեան Տիգրանակերտցի
32. Գասպար Մելքօնեան Պօլսեցի
33. Գաւիթ Գէորգեան Կիւմիւրճինեցի
34. Նաղարէթ Աբարթեան Ուլնեցի
35. Պօղոս Յարութիւնեան Նիկոմիդացի
36. Կարապետ Ստեփանեան »

ԹՈՇԱԿԱՒՈՐՔ

- 1. Գրիգոր Յակովբեան Եգիպտացի
2. Յակոբ Պօղոսեան Յոպպէցի

ՈՒՍՄՈՒՆՔ

- 1. Գերականութիւն
2. ձարտասանութիւն
3. Գծագրութիւն
4. Հովուական Աստուա.
5. Բարոյախօսութիւն
6. Գրիստոնէական
7. Գեղադրութիւն
8. Աշխարհագրութիւն
9. Բնական պատմութ.
10. Ս. Գրոց պատմութ.
11. Ընթերցանութիւն
12. Ազգ. Պատմութիւն
13. Բնագիտութիւն
14. Տաճկերէն
15. Ընդհ. Պատմութիւն
16. Թուարանութիւն
17. Երաժշտութիւն
18. Գաղղիարէն

Մանուկ-Բիւն . - 1865 էն մինչեւ 1872 Հոկտ. 24 . 77 աշակերտ ընդունած են , յորոց 8 հո- գին եկեղեցական կոչումն ստանալով դպրոցէն ելած են , 1 հոգի վիայական առնելով Հայրենիք գնացած է , 1 հոգի ծնողաց խնդրանք արձակ-

ուած է , 1 հոգի վախճանած է , եւ 28 հոգի զանազան պատճառներով արձակուած են : Իսկ այժմ դպրոցին մէջ 38 աշակերտք կան . որոց 56ը ձրիաթոշակ , իսկ 2ը թոշակաւոր են :

ԲԱՂԱՔԻ ԳՊՐՈՑՔ (1)

Քաղաքին մէջ երկու դպրոց եւս կայ , մին տղայոց եւ միւսն աղջկանց համար : Առաջինը՝ որ նախակրթարան մ'է միայն , 25 աշակերտ կը պարունակէ , որք կուսանին Քր- ըիստոնէական . - Քերականութիւն . Գաղղիարէն եւ Արաբերէն . եւ որոց դասատուք ժառանգա-ւորաց ուսումնարանին դասատուներէն միայն Գաղղիացին է : Իսկ Հայերէն՝ Սարկաւազ կա-րապետ , եւ Արաբերէնի ուսուցիչը տեղացի օ-տարազգի մը : Երկրորդը՝ աղջկանց վարժարանը կը գտնու-ւին 30 ի չափ աշակերտուէիք , որոնց կաւան-դուին Քրիստոնէական ուսումն . Քերականութիւն եւ Զեռարուեստ : Հայերէնի ուսուցիչն է Գա- եւ Զեռարուեստ : Հայերէնի ուսուցիչն է Գա- ձեռարուեստի ուսուցիչը , Քաղաքիս օրիորդնե-րէն Մարիանէ Մնացականեան :

Երուսաղէմայ Սրբազան Պատրիարքին կողմէ 1875 Ապրիլ 27 թուականաւ զրկուած Երուսա-ղէմայ վանուց ներքին վիճակին տեղեկագիրն է հետեւեալը :

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿԻՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՒԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

Զոր կը մատուցանեմք Ազգային վարչական պատկառելի Ժողովոյդ մոտն առ մոտն և որուն ընդարձակն կը խոստանանք Տաղուց հետ զրկել :

Ա. - Ս. Յակոբեանց վանքը՝ Ս. Երուսաղէմի մէջ քաղաքին Արեւմտեան կողմը Սիօն լեռան վրայ շինուած է , եւ երկու մասի կը բաժնուի ու խոստաւորաց եւ միաբանից . առաջինը որ երեք

(1) Քաղաքին դպրոցաց ծախքը Ս. Երուսաղէմոյ վա- նուց մտուէկն կ'հոգացուի . ասոր համար արժան տե- սանք այս տեղեկութիւններն տալ , ինչպէս կը տեսնուի 4 Նոյեմբեր 1872 Ամեն Ս. Պատրիարք Հօր գրութեան մէջ :

հարիւր սենեակէ կը բաղկանայ հազիւ հարիւրը լուս են, մնացեալները ներքնայարկ մութ, եւ գէջոտ, բռնութեանց ժամանակ երկրաշարժի ժամանակ լինելուն. երկրորդն եօթանասուներեք հազիւ կայ, վարդապետաց մէկ մէկ սենեակ տրուած է միայն ննջելու համար. այս սենեակներէն մեծագոյն մասը ներքնայարկ եւ մութ ու խոնար տեղեր են, այս մասին մէջ են նաեւ վանքին փուռն աղօրին խոհանոցը մոմատունը եւայլն:

Տարածան ալ վանքին բակն է, ուր երկու մեքենայ շարունակ կը գործեն կազմարարք, ցուլիչք եւ գրաշարք 15 ի չափ անձինք են:

Ուսումնարանն որ երկու շէնքերէ կը բաղկանայ մին դաստառութեան իսկ միւսն հանգրստութեան, ոչ միայն վանուց՝ այլ եւ քաղաքի ամենէն բնական թէ տեղով եւ թէ շէնքով:

Վանուց պարսպէն դուրս դէպի Սրեւելեան հարաւ Ս. Հրեշտակապետ անուամբ վանք մը եւս կայ զատ, որ կը բաղկանայ երեսուն սենեակներէ բոլորը ներքնայարկ, ուր կը բնակին մայրապետք եւ կ'աշխատին թէ միաբանից եւ թէ դպրոցի լուսաբերները ընելով սոյն վանուց մէջնէ Քրիստոսի առաջին բանտն որ Աննայ քահանայապետին տունն է:

Քաղաքի պարսպէն դուրս դէպի հարաւ Ս. Փրկիչ անուամբ վանք մի եւս կայ, որ կայիափայի տունն է, ունի մէկ եկեղեցի եւ 3 սենեակ, ուր կը բնակին ճգնաղգեաց միաբաններէն ծերացեալ եղբայրք. այս վանուց կից է գերեզմանատունը:

Բեթլէմէ մէջ ալ վանք մը ունիմը որ քսան սենեակներէ կը բաղկանայ, ուր կը բնակին այն տեղ գտնուող միաբանք եւ ուխտի գնացող ուխտաւորք: Ռէմիլէ եւս վանք մը ունիմը տանն եւ հինգ սենեակով, ուխտաւորք գիշեր մը կը բնակին այն տեղէն անցած ատենին, եւ մէջը միշտ մէկ վարդապետ, մէկ թարգման եւ երկու սպասաւոր կայ:

Յոպպէ եւս վանք մի ունիմը 25 սենեակէ բաղկանալ, ուր կը բնակին ուխտաւորք եկած եւ դարձած ատենին, եւ որոց ղիբութեան համար միշտ պաշտօնականներ կան, թարգման խաւազ եւայլն:

Բ. Ս. Յակոբեանց վանուց միաբանութիւնը կը բաղկանայ հինգ եպիսկոպոս, 44 վարդապետ, 10 սարկաւազ, 10 գալիբ եւ 60 ի չափ քրճաղգեաց միաբաններէն: Միաբանից այս

թիւը սահմանափակ չէ, երբեմն կը նուազի եւ երբեմն կ'աւելանայ: Սարկաւազք Ս. Աթոռոյն մէջ ժամերգութիւն կընեն հանդերձ սաղմոսերգութեամբ, եւ ամէն օր կարգաւ Ս. Աստուածածին կերթան երկու վարդապետ մէկ սարկաւազ եւ երկու դպիր, այն տեղ Ս. Պատարագ մատուցանելու, երեք ամիսը մի անգամ ալ երեքական վարդապետ մէկ սարկաւազ Ս. Յարութիւն եւ Ս. Ծնունդ կերթան այն տեղ եւ կեղեցական պաշտօն վարելու, եւ Ս. Պատարագ մատուցանելու: Ս. Յարութիւն ժամը 5 ին եւ Ս. Ծնունդ՝ 8 ին կընելով միւս ազգաց հետ ունեցած որոշեալ ժամանակի համեմատութեամբ:

Ս. Աթոռին մէջ բացի եկեղեցական պաշտօնավարութենէ վանուց այլ եւ այլ պաշտօններ կը վարեն, եւ եթէ ժամանակ ունենան՝ ընթերցման կը պարապին, Քրցագրեաց միաբանք կ'աշխատին խոհանոցը, փուռը, ջրաղացը, մոմատունը եւ վանուց այլ եւ այլ ծառայութեանց մէջ, նոյնպէս ի Ս. Յարութիւն Ս. Ծնունդ, Ռէմիլէ եւ Յոպպէ:

Գ. Միաբանութեան ապրուստը վանքը կը հողայ՝ բաց ոչ լիովին եւ կատարեալ, կերակուրը ընդհանուր է, առաւօտուն եւ երեկոյին երկերկու տեսակ. առաւօտուն ապուր եւ ուրիշ կերակուր մը երբեմն միս եւ երբեմն մախառնայ, երեկոյին փիլաւ, մսեղէն կերակուր մը եւ քիչ մը պանիր, եթէ ուտիք է. այսպէս պահոց օրերն ըստ պատշաճի, իւրաքանչիւր անգամուն 100 տրամ հացով, սակայն թէ հաց եւ թէ կերակուր սահմանափակ չէ, ուղղը կարող է քիչ մը աւելի ուտել:

Վանքի կողմէն բացի այս կերակուրէն կը տրուի 200 դահեկան տարեկան, եւ իւրաքանչիւր պատարագի կէս մէճիտ ժամուց, ուր որ ալ ըլլայ. սակայն հարկէ ըսել թէ իւրաքանչիւր վարդապետի հազիւ թէ տասը պատարագ կիցնայ տարին:

Սարկաւազաց տարեկան հարիւր զուրուշ, գարաց 60, քրցաղգեաց միաբանից 30 զուրուշ. այս երեք կարգին իրենց սենեակին լուսաւորութեան իւր, լուսնալեաց եւ սափրիչի ծախս, եւ մէկ ձեռք զգեստ որ կը բաղկանայ մէկ շապիկ, մէկ վարտիկ, մէկ զպուն, հողաթափ կոշիկ կը տրուին, թէպէտ ուղուեցաւ որ միաբանից ամէն պէտքերը վանքը հողայ իւրաքանչիւրին աստիճանին համեմատ, ինչպէս որ ալ իրաւունք է, սակայն տեսնելով որ վանքի

վիճակը չ'ներելը, միայն վարդապետաց ժամոցին վրայ մէկ հինգոց ալ աւելցուցաւ 1866 ին:

Մենք խղճով կը խոստովանուիմք որ միաբանութեան ներքին վիճակը ոչ թէ նոր, այլ ի վաղուց մինչեւ ցայսօր գոհացուցիչ չէ, եւ ժամանակ վամանակ մասնաւոր փոփոխութիւն ալ եղած է եթէ. դարձեալ կատարեալ կերպով գոհացուցիչ վիճակի չէ հասած. ասոր բուն պատճառը վանուց արտաքին ծախուց աւելնալը եւ վանքի մուտքը կից չ'կրնայ համապատասխանելու է: Որով միաբանութիւնը ստիպուել է միշտ ինքզինքը զրկել եւ ինչայող վիճակով մը կառավարել. եւ կարելի եղածին չափ ազգին օգնել ամեն կերպով ինչպէս որ պիտի տեսնուի վանուց ընդհանուր հանգէն:

Բ. Ս. Յակոբեանց վանուց մուտքը կը գոյանայ Ա. ուխտաւորաց արդիւնքէն. այս արդիւնքը միշտ մէկ եղանակ չէ, այլ միշտ փոփոխութեան ենթակայ, ուխտաւորաց թուոյն նկատմամբ: Բ. կալուածներու արդիւնքէ որ ընդհանուր արդիւնք ընդհանուր ծախս հանելով, գրեթէ հարիւր յիսուն երկու հարիւր հազար զչ հազիւ կը մնայ. վանուցս միւս արդիւնքը, ինչպէս զանազան տեղերու գանձանակներու եւ կտակներու հազիւ 5000 ի կը հասնի. անա ասոնք են Ս. Աթոռոյս բռն արդեանց աղբիւրները. սպարանն ալ թէպէտ արդեանց աղբիւր մ'է բաց. սակէ դեռ արդիւնք չէ տեսնուած, թէպէտ կան բազմաթիւ արդարեալ մատեանք որք հետզհետէ կը վաճառուին:

Ե. Վանուցս ելքն, Ա. մատակարարութեան ծախսն է, Բ. Սուրբ տեղեաց առթիւ եղած ծախսը. Գ. Տեղոյն գրութեան նկատմամբ արտաքին ծախս մի եւս ունի, որ երբեմն ամէն ծախսերը կը դերազանցէ. այս ծախսը յատաջ կուղայ Ս. տեղեաց մասին օտար ազգաց հետ եղած վէճերէ, եւ այս առթիւ մասնաւոր անձանց սօճիկներ կը տրուին շարունակ, որոց սահմանալ պարգեւ կը տրուի. Գ. շինուածոց ծախսը որ ամենէն ինչայող հազիւ 50.000 զով կը գոցուի տարին. միայն Նրուսաղէմի մէջ. Ե. պատահական ծախսեր որ գրեթէ ամէն տարի պակաս չէ ինչպէս են ուխտաւոր, աղքատաց եւ երեւելի օտարազգաց այցելուաց համար. Զ. Ուսումնարանի եւ տպարանի ծախսեր:

Այս մեծագուտար ծախսէն իրաւամբ դու

տելով փոքր ծախսն է բուն իսկ միաբանութեան համար եղած ծախսը՝ որ գրեթէ իւրաքանչիւրին 5 դահեկան հազիւ կը հասնի. երկրորդ Ուսումնարանի ծախսը որ արգարեւ վանուց դրութեան նկատմամբ պէտք էր ամենէն մեծը լինէր. սակայն ցաւելով կըսեմք որ այնպէս չէ, որովհետեւ միւս ծախսերը այնպէս ստիպողական կարգի անցած են, որ անկարելի է զանց ընել. վանուցոյ միաբանութիւնը պարտաւորած է միշտ ինք զինքը այնպէս տնտեսագիտութեան մէջ պահել, եւ որքան հնար է Ս. Նրուսաղէմի մէջ իրեն դիր մը չ'կորսուել օտար ազգաց յառաջ:

Զ. Վանուցս վարչական ձեւը արդէն յայտնի է իւրաքանչիւր գործ իւր գործակալը ունի, թէ վարդապետաց եւ թէ քրճաղգեաց միաբան եղբարց կարգէն. որոց բաց ի որոշեալ տարեկանէն գործոյն եւ պատիճանին համեմատ դրամական նուէր մը կը լլայ:

Սոյն գործակալաց վերին տեսչութիւնը Սրբազան Պատրիարքը կընէ Տ. Ժողովոյ հետ, բաց ի լուսարարէն եւ Տ. Ժողովոյ անդամներէն որ միաբանութեան Ընդհանուր Ժողովը կընտրէ:

Գործակալութիւնքն են.

Ա. Լուսարարապետ, որ եկեղեցոյ բարեկարգութեան եկեղեցական անօթից եւ լուսարարաց վրայ կը հսկէ. եւ որոյ իրաւասութեան տակն են բոլոր եկեղեցական պաշտօնեայք Եկեղեցոյ մէջ:

Բ. Փոխանորդ ի Կ. Պօլիս, որոյ միջոցաւ կ'ըլլան Ս. Աթոռոյս ամեն գործերը թէ Ազգ. Վարչութեան, եւ թէ Բ. Գրան եւ թէ դեսպանատանց հետ. եւ ուրիշ զանազան աթոռային գործեր:

Գ. Թարգման, տրա ձեռք կըլլան Ս. Աթոռոյս յարաբերութիւնները եւ գործերը օտար ազգաց եւ տեղեցոյ կառավարութեան հետ. եւ որ կը հսկէ քաղաքացոց եւ ուխտաւորաց վերայ խոսովութիւնը չ'պատահելու եւ չ'լիսանելու համար. եւ որոյ իշխանութեան տակն են առհասարակ քրճաղգեաց միաբանք:

Դ. Գարպաստընկալ. որ կ'ընդունի ուխտաւորաց նուէրները եւ նոցա հանգստութեան հող կը տանի, իւր գործակատարներն են հիւրընկալ վարդապետք՝ սենեկապան եւ շորապան:

Ե. Մատակարարն՝ Տնտեսական ծախուց վերայ կը հսկէ, եւ որմէ կախում ունին սեղանատան, խոհանոցի, փուսն եւ ջաղարջքի պաշտօնեայք:



2. Տեսուչ տպարանի, որմէ կախումն ունի տպագրութեան վերաբերեալ ամեն պարագաներ :

Է. Տեսուչ ուսումնարանի որ իւր նախագահութեամբ ուսումնական խորհուրդով մը կը հսկէ դպրոցի բարեկարգութեան եւ յառաջադիմութեան :

Ը. Տեսչութիւնք Ս. Աստուածածնի Ս. Յարութիւն, Ս. Մանգեան Ռէմէի, Հոպպէի, Վիլիամսի, եւ Գամակոսի, որք կը հսկեն իրենց յանձնուած տեղեաց պահպանութիւն բարեկարգութեան եւ գտնուած միաբանից օրինակորութիւնն :

Թ. Տ. Ժողովը գործակալաց թէ ամեն ամիս եւ թէ տարեկան ամեն հաշիւները նայելով, տարեկան միաբանութեան Ընդհ. Ժողովոյն կ'ներկայացունէ ի գիտութիւն եւ ի վաւերացումն :

Ըստ որում Ս. Երուսաղէմի հաշիւները ցարդ եկած չեն . Վանօրէից խորհուրդը չկրցաւ ոչ սոյն տեղեկագիրները նկատողութեան առնուել, եւ ոչ ըստ օրինի յարաբերութիւնն ունենալ Ս. Երուսաղէմի Միաբանութեան հետ, ինչպէս որ Սահանադրութիւնը եւ Ս. Երուսաղէմի համար Ընդհանուր Ժողովով հաստատեալ կանոնադիրը կը պահանջէին :

2. — ԱՐՄԱՇ

Վանօրէից խորհուրդն բարեբաղդ կը համարի զինքն իր համարատուութեան առաջին շրջանին մէջ գէթ ազգային համբաւաւոր վանք մը ցուցնել, որ սահմանադրապէս իր ամեն պարտաւորութիւնները կատարելու հոգ եւ ջանք ունի :

Արմաշու Զարխափան Ս. Աստուածածնի վանքըն ըստ օրինի ներկայացուցած է Խորհրդոյս .

1. Իր սահմարին շինութեան համար հաւաքեալ գրամոց եւ ծախուց հաշիւը .
2. 1872 տարուոյ եկամտից եւ ծախուց հաշիւը .
3. 1873 տարուոյ եկամտից եւ ծախուց հաշիւը .
4. Իր հին պահանջից ցուցակը, որոյ գումարն է 293855 ռ :

Վանօրէից խորհուրդն օրինակոր գտաւ այս հաշիւները, որոնք տուժարակալութեան օրինօք

բռնուած էին . Ս. Տաճարին շինութենէն մընացած պարտուց վճարման համար Վանօրէից խորհուրդը պահանջից գումարին խիստ մեծագոյն մասին վրայ յոյս չուենաւով, արժան դատեց բարեւեր ազգայնոց հանգանակութեանը դիմել, եւ ջնջել պարտքը . որոյ տոկոսին արդիւնքը միշտաւ վանուց յառաջադէմ վարժարանին ծախուցը վրայ պիտի յաւելնար, Հողագործութեան ուսումը ընդարձակելու խորհրդով, կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովոյ որոշմամբ թէ եւ ժապաւիտեալ տուժար մը յանձնուեցաւ Արմաշու Գեր. Վանահօր . բայց ժամանակիս զրամական տաղնապը եւ մանաւանդ Ասիոյ դանազան կողմերը երեւան եւ լաժ սովուն համար բացուած հանգանակութիւնները պարտաւորեցին առ ժամս ետ թողուլ այս հանգանակութիւնը, Վ. Խորհուրդն ուրիշ միջոցի մ'ալ դիմել ուղղելով, հետեւեալ գրութիւնը ներկայացուց առ Քաղաքական Ժողովը, որոյ ուշադրութեանն ենթակայ եղած է :

Պարզէն

«Պատկոտելի Քաղաքական Ժողովը գիտէ՞ թէ Արմաշու վանուց Ս. Տաճարին շինութենէն մընացած պարտքը վճարելու համար Խորհրդոյս առաջարկութեամբը եւ պատկոտելի Ժողովոյդ հաւանութեամբը հանգանակութեան տուժար մը յանձնուեցաւ Արմաշու Գեր. Վանահօր . սակայն այլ եւ այլ պատճառներ, մանաւանդ վերջին օրերուս մէջ Ասիոյ սովատանջ Ժողովրդեան համար բացուած հանգանակութիւնը պարտաւորեցին յիշեալ Վանահայրն առ ժամս ետ թողուլ իր ձեռնարկութիւնը եւ պատեհ առթի սպասել :

«Արդ Վանօրէից խորհուրդս նկատելով Արմաշու բազմաջան միաբանութեան եւ վանահօր այս մասին հոգն ու մտատանջութիւնը, որոնք ի հարկէ ձեռնարկուած բարեկարգութեան եւ յառաջագիմութեան միջոցներուն անուղղակի արգելք կրնան ըլլալ . նկատելով մանաւանդ որ, եթէ Արմաշու վանուց այս պարտքը ջրնջուի . նախկին օրոշման մը համաձայն անմիջապէս նոյն վանուց վարժարանին մէջ հողագործութեան ուսումը ըստ արժանւոյն պիտի ընդարձակուի, որ յոյժ կարեւոր եւ կենսական ուսում մ'է մեր Ազգայնոց, Վանօրէից խորհուրդս չէր կրնար անտարբեր մնալ . ուստի Արմաշու վանուց պարտքը վճարելու ուրիշ միջոց

մ'ալ ուշադրութեան յառնելով, կը փութայ զայն Ժողովոյդ խմատունն տնօրէնութեանը ենթարկել :

«Յայտնի է, որ Բարեգործական ընկերութեան հաւաքած գումարը, ինչպէս նախորդ Քաղաքական Ժողովոյ համարատուութենէն կերելի, արդէն խնդիր եղած է Ազգային կեդրոնական Վարչութեան համար : Այս գումարը մինչեւ 3550 լիրայի ելած, եւ ընկերութեան նպատակըն ալ Հողագործական վարժարան մը բանալ ըլլալով, կառավարկենք որ այդ գումարին համար բարեհաճի Վարչութիւնը ձեռք առնուլ այն բանակցութիւնը, որ նախորդ Քաղ. Ժողովըն սկսած էր, նոյն ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ առեւնապետ Աղաթօն Մկրտիչ Էֆէնտիին հետ, եւ ջանալ համաձայնութիւն մը գոյացնելով, այդ գումարը յանուն կեդրոնական Վարչութեան ստանալ եւ Արմաշու վանուց յանձնել . որով կարենալ յիշեալ վանքն անմիջապէս ձեռնարկել հողագործութեան ուսման կանոնաւոր աւանդութեանը : Ասանկ ընելով թէ Բարեգործական ընկերութիւնն իր նպատակին հասած եւ մանաւանդ չուա հասած կրլայ, եւ թէ հողագործութեան կանոնաւոր վարժարան մը կուսկնայ Ազգը, որուն օգուտները ամէն շայ կզգայ : Հարկ չկայ բացատրել թէ, Արմաշու վանքը ոչ միայն ըստ ամենայնի յարմարութիւն ունի այդպիսի վարժարան մ'ուսնեալու մասին, այլ եւ ամէն երաշխաւորութիւն կուտայ այդ վարժարանին յարատեւութեանը եւ արդիւնաւորութեանը » :

10 մայիս 1874 ի Խորհրդարան Ղալաթիոյ Թիւ 167

Պարտուց երեսէն վանքին կրած նեղութեանը մէջ Արմաշու Միաբանութիւնը ազգին օգտակար ծառայութեանց մասին կատիլ չուղղելով, ինչպէս իր բարեհամբաւ վարժարանին բարեկարգ յառաջագիմութեանը հոգ ունի, (ուր Խորհրդոյս կողմանէ զրկուած ձրիավարժ աշակերտներէն զատ 8 ձրիավարժ աշակերտ ալ նիկոմիդիոյ թեմերէն եւ 50 թ մօտ ալ թոշակաւորք կը դաստարակուին) նոյնպէս եւ իր տպարանին յառաջագիմութեանը, եւ Յոյս հանդիսին օգտաւէտ նիւթոց պարունակութեանը . Գեր. Վանահայրը անձամբ ներկայացաւ եւ Խորհրդոյս ծանոյց Քերթեման հանգուցեալ Ռուբէն Էֆ. ի ար-

պարանին գործիքներն ամբողջ դիւրագնոյ առնելու սակարկութեան մէջ գտնուիլը . եւ Խորհրդոյս հաւանութեամբն անոնք գնուեցան եւ Արմաշի տպարանը ձոխացաւ ոչ միայն զանազան գրոց եւ այլ տպարանական նիւթոց առաւելութեամբ, այլ եւ անգղիական արագատիպ մամլով մ'ալ :

Հոս կը զննեք նախ Արմաշու հանգուցեալ վանահօր Գէորգ Սրբազանի մէկ տեղեկագիրը, որ 1872 հոկտ. 4 թուականաւ զրկուած է առ կեդր. Վարչութիւնն, եւ վանքին առաջնորդութենէն բաժանեալ մնալուն օգտակարութեանը եւ վարժարանին ուսմանց յայտադրին վրայ մանրամասն կը խօսի : Հարկ չէ ըսել թէ վանքերը առաջնորդութիւններէն բաժնելու գրութիւնն արդէն ընդունուած ըլլալով, Վարչութիւնն այն ատեն այս մասին պէտք եղած սպահովացուցիչ պատասխանը տուած է Գէորգ Սրբազանին :

Պարզէն

« Ամենապատիւ Սրբազան Տէր « Քաղաքական Ժողովոյ որոշման համեմատ առ հասարակ ամեն կողմեր զրկուած ցուցակի օրինակին վրայ մեր անմիջական տեսչութեան ներքեւն եղած երկու գիւղերու վիճակագրերն շինելով ահաւասիկ զրկած եմք :

« Սուրբ վանուցս ներքին վիճակը, ի նիւթականի ծանօթ է կարծեմ, ազգային կեդրոնական Վարչութեան՝ Տնտեսական խորհրդոյն քանի մ'ամիս յառաջ մեր վրայ կատարած համարոյ քննութեան վրայ : Եկեղեցւոյ շինուածն ալ որ այս ձեւովն կ'վերաբերի, աւարտեցաւ ուղղութեամբ Աստուծոյ, որուն վրայ լիագոյն տեղեկութիւն տալու համար մտադիր եմք յատուկ տեսարակով թէ գործողութիւնքը եւ թէ հաշիւները հրատարակել . յորմէ ընտանաբար ի յայտ պիտի գայ թէ այս շինութիւնը վանքին նիւթականին վրայ ինչ տարբերութիւն գըրած է : Իսկ, ի բարոյականի, ընդ պաշտպանութեամբ Սուրբ Աստուածածնի խաղաղ եւ անգործ է, եւ վանական գիտուն եւ բարեկրօն յառաջագիմութեան սկիզբն զրած եմք, եւ կ'վկայեմք առաջի Սրբազանութեանը եւ Ազգին թէ Արմաշու Զարխափան Սուրբ Աստուածածնի Վանքը Սուրբ Եկեղեցւոյ եւ հայկական ազգին ճշմարիտ շահերուն կրնայ ծառայել այս գրութեան մէջ յորում այսօր կ'գտնուի ուրոյն եւ





**ԱՐԴԻՒՆՔ**

	Ղուրուշ	Փարայ
Վերածեալ	406022	
Ի նուիրակութենէ Գէորգ Ծ. Վարդապետի յԱսիոյ կողմանց	58595	5
Ի նուիրակութենէ Վանահայր Տ. Եփրեմ Վարդապետի յԵրոսոստան կողմանց	19285	20
Ե. անգամ ի փողերանոցն տարուած 8865 տրամ արծաթոց գլինն	52989	20
Գինք այլ եւ այլ իրաց վաճառելոց	2155	30
Ի նուիրակութենէ Կարապետ սարկաւազի ի Պալլըքէսէր եւ ի շրջակայն	6502	25

1868. Ի Նոյեմբեր 26 Ե Վերջին 1869 Ի Ե. Յուր Գեորգ Ե Երեմի վարդապետաց

2. անգամ ի փողերանոցն տարուած 5680 տրամ արծաթիք ձեռամբ Խ. Վ.	15620	55
Նպաստ դրամական յԱրմաշացոց	400	
Ի նուիրաց Ատաբազարցոց	100	
Վանքին մէջ յուխտաւորաց գոյացեալք	5159	

1870—1874 Վերջին Զ. Կերտի Սեբաստի վանահոր

Վանքին մէջ յուխտաւորաց գոյացեալք	5154	20
Յարդեանց նուիրակութեան վանահոր ի կողմանս Փաղար գիւղի	15287	
Ե. անգամ ի փողերանոցն տարուած 1.815 տրամ արծաթիք ձեռամբ Խ. Վ.	5579	55
Նուէր յԵրեմի եւ ի ձերբահ գիւղից	2596	50
Կէյվէի միջազիւղէն Երկանեան Մ. Ղուկաս աղայի կտակն	1000	
Պատահականք	5610	
Նուէր յԱրմաշացոց	590	
Արդիւնք յօժուցիցն սուրբ Վիմին եւ Սեղանոյն	1902	
1870 ի խրդակի ընծայարեւութեան արդիւնք	25761	30

1872 յԱրեւել Վերջին Նոյեմբեր Ե Ե. Յուր Գեորգ Սեբաստի վանահոր

Նուէր յԱրմաշացոց	5728	20
Վանքին մէջ յուխտաւորաց գոյացեալք	741	
Պատահականք	4670	
Ը. անգամ ի փողերանոցն տարուած 2,925 տրամ արծաթիք ձեռամբ Ն. Վ.	8629	25
Արդիւնք կիւքանայրութեան յօժուցիցն սուրբ Տաճարին	12557	
Թ. անգամ ի փողերանոցն տարուած 6,718 տրամ արծաթիք ձեռամբ Ն. Վ.	21055	20

**ՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆՔ**

Փոխառութիւն 1,150 օսմանեան լիրայ ոսկւոյ ի Փէրվազեան սեղանաւոր		
Մեծ. Յովհանն աղայէ Ակնեցոյ	155600	
Փոխառութիւն 120 օսմանեան լիրայ ոսկւոյ յԱրմաշացի Մ. Թորիկեան		
Յակոբայ եւ Թումասեան Անտրիկ Յովհաննէսէ	14400	
	805252	55

**ԾԱԽՓ**

	Ղուրուշ	Փարայ
Վերածեալ	400625	5
Կապար	5650	20
Երկաթ	54815	
Քար ի Զիլլի կէօլէ	6721	
Ծառոց եւ գերանաց	7260	
Խորասանճիներուն	4555	50
ձարտարապետի եօթն ամսականքն	10998	
Որմնադրաց 1555 օրականք	26428	20
Քարակոփից 1598 »	25082	
Բեռնակրաց 557 օրականք	6282	20
Երկաթագործաց 196 օրականք	2674	
Հասարակ գործաւորաց 2787 օրականք	17594	
1858. Ի Նոյեմբեր 26 Ե Վերջին 1869 Ի Ե. Յուր Գեորգ Ե Երեմի վարդապետաց		
Ի տուժարէ մանր ծախուց	555	
Երկաթ	1528	
Քար	1200	
Ծառոց եւ գերանաց	4250	
Խորասանի	475	
Երկաթագործաց եւ բանւորաց 67 օրականք	6558	50
1870 — 1874 Վերջին Զ. Կերտի Սեբաստի վանահոր		
Ի ցուցակէ մանր ծախուց	9746	50
Կապար	20824	50
Երկաթ	1298	55
Կիր	2996	10
Քար	9425	50
Ծառ, գերան, տախտակ	12495	50
Խորասանի	2055	
Որմնադրաց 621 օրականք	15052	20
Քարակոփից 547 օրականք	9462	
Բեռնակրաց 759 օրականք	8779	
Երկաթագործաց 418 օրականք	5948	
Հիւսանց 1247 օրականք	22250	
Հասարակ գործաւորաց 996 օրականք	6086	20
Սղոցողաց 75 օրականք	596	
1872. յԱրեւել Վերջին Նոյեմբեր Ե Ե. Յուր Գեորգ Սեբաստի վանահոր		
Ի ցուցակէ մանր ծախուց	8794	10
Երկաթի եւ երկաթագործի	19061	5
Կիր	7444	20
Քար, գերան, տախտակ	5571	20
Ծառ եւ ներկի վերաբերեալք	11486	20
Խորասանի եւ աղիւտագործաց 560 օրականք	4525	20
Մեփոզաց 1242 օրականք	50419	
Քարակոփից 268 օրականք	4402	
Հիւսանց 698 օրականք	12748	
Հասարակ գործաւորաց 1557 օրականք	11711	10
	5705	
Ստակի վնաս		
	805252	55

6392  
39



# ՀԱՇՈՒ

ԲՈՎԱՆԳԱԿ ԱՐԳԵԱՆՅ ԵՒ ԾԱԽՈՒՅ 1872 ՏԱՐԻՈՅ

ԱՐԳԻՒՆՔ	Ղուրուշ	Փարայ
1872 ի վերջը յարկեղ պատրաստ դրամն . . . . .	951	15
Գարպաս . . . . .	42578	15
Մատաղագին . . . . .	5089	10
Մանկանուէր . . . . .	5185	20
Իւղազին եւ մօմազին . . . . .	640	20
Տարեկան ողորմութիւն . . . . .	40	
Ի մօմատանէ . . . . .	49445	55
Ի դանձանակէ գաւթի . . . . .	16504	10
Ի դանձանակէ աւտզ սեղանոյ . . . . .	510	50
Ի խաչանդատէ . . . . .	1559	10
Ի մասանց կնքահայրութենէ . . . . .	1059	10
Ի վերնոյ շորատանէ . . . . .	717	10
Ի մառանէ . . . . .	4550	
Ի կրպակէ եւ ի փռանէ արտաքնոյ . . . . .	4497	50
Ի ձմերոցէ նախրաց եւ անդէոց . . . . .	11695	
Ի փարախէ խաչանց . . . . .	5701	20
Ի շտեմարանէ արմտեաց . . . . .	1269	
Մետաքս եւ խօզակ . . . . .	62065	20
Այլեւայլք . . . . .	15476	
		25
	222695	
Արդեանց նուազութեան պատճառաւ մնտուկին բացը . . . . .	18086	10
	240781	10

# ԵՑՈՅՑ

ԻՎԱՆՍ ՉԱՐԻԱՓԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՅԱՐՄԱՇ

ԾԱԽՔ	Ղուրուշ	Փարայ
1871 էն մնացած բացը . . . . .	59499	20
Բոլոր վարձկանաց տարեկանք տ. յեր. 214-215 տօմ . . . . .	42841	20
Խանուէ եւ շաքար . . . . .	2685	20
Մսոյ եւ իւղոյ . . . . .	9254	
Համմոց . . . . .	2744	50
Ընդեղինաց . . . . .	7057	50
Ըմպելեաց . . . . .	918	25
Կերակրոյ յօտար տեղիս . . . . .	559	10
Փայտի ածխոյ եւ օճառի . . . . .	2144	10
Վառելեաց . . . . .	3700	10
Կահուց եւ կարասեաց . . . . .	8964	10
Շինուածոց եւ նորոգութեանց . . . . .	15877	10
Մանր օրականք կանանց . . . . .	929	
Վարելոյ ցանկոյ քաղելոյ եւայլն օրականաց . . . . .	5706	
Մշակական գործեաց . . . . .	1518	50
Գնեալ կենդանեաց եւ նոցա պիտոյից . . . . .	4155	20
Գնեալ զեանոց եւ արմտեաց . . . . .	590	
Թաղաւորական հարկահանութիւնք . . . . .	9567	
Ի պարտէզէ բանջարոյ . . . . .	490	20
Ազօրեաց . . . . .	416	10
Շերամատածութեանց եւ թթեանց . . . . .	21055	
Նորատունկ այգւոյն եւ մրքաստանին . . . . .	994	
Միաբանութեան եւ ուսումնարանի մանկանց զգեստուց . . . . .	17472	20
Միաբանութեան եւ ուսումն. ոտից ազանելեաց . . . . .	1872	20
Գրոց լրագրաց թղթոյ եւ ուսումն. գործեաց . . . . .	5555	15
Պարգեւի եւ ողորմութեան . . . . .	5041	20
Բժշկաց դեղոց բաղանեաց եւ սախրչաց . . . . .	2890	20
Մաքս եւ բաժ . . . . .	161	50
Երթեկեկութեան նաւու ձիոց եւայլն վարձ . . . . .	4406	10
Տպարանի . . . . .	108	
Պատահականք . . . . .	6088	
	240781	10

# ՀԱՇՈՒ

1873

ԱՐԴԻՒՆՔ	Ղուրուշ	Փարայ
Ի ձմերոցէ . . . . .	10055	
Ի փարախէ (սաշանց . . . . .	5895	
Երկրագործութենէ . . . . .	18510	
Ի շերամոյ . . . . .	52591	20
Ի կրպակէ եւ ի փռանէ . . . . .	5056	
Ի վերնոյ շորատանէ . . . . .	4164	
Ի թողակաւոր աշակերտաց վարժարանին . . . . .	18015	
Ի սպարանէ . . . . .	10	
ԵԱյգւոյ . . . . .	51	20
Ի մասնաւոր նուիրաց . . . . .	2808	20
Ի տարեկան ողորմութեանց . . . . .	78	
Երեզոզնէ եւ ի մոմագնէ . . . . .	201	50
Ի խաչանգնդատէ . . . . .	1960	50
Ի մոմատանէ . . . . .	55028	50
Ի դարպասական ողորմութենէ . . . . .	52402	20
Ի մատաղագնէ . . . . .	5852	
Ի կնքահայրութենէ սրբոց մասանց . . . . .	1452	50
Ի մանկանուիրէ . . . . .	2276	10
Ի գանձանակէ Տիրամօր Ս. Պատկերի . . . . .	15580	20
Ի գանձանակէ Աւագ սեղանոյ . . . . .	604	
Ի զէն եւ շահէ . . . . .	62	
Ի նուիրակութենէ տարւոյս ի վիճակացն Նիկոմիդայ Կուտինայի եւ Պրուսայի . . . . .	27946	20
Ի ին սահանջից . . . . .	4800	
ԵԱյլեւայլից . . . . .	9282	
Հանգուցեալ վանա. Տ. Տ. Գէորգ սրբազան Արքեպի անձնական դրամքն . . . . .	10000	
Մխաբանութեան գանձանակի արդիւնքէն աւելցածը վանուց արկղին անցաւ . . . . .	15174	55
Տարւոյս Կեկեմբերի վերջը արկեղ բացը . . . . .	28446	55
	278064	

# ԵՑՈՅՑ

ԱՄԻՆ

ԾԱԽՔ	Ղուրուշ	Փարայ
1872 ի արկեղ բացը . . . . .	18086	10
Ձմերոցի . . . . .	5542	10
Փարախի Խաչանց, եւ (աղնամ եւ մացու 22 խառամանի զին) . . . . .	9689	20
Երկրագործութեան եւ (տասնորդական տուրք) . . . . .	47558	10
Շերամոյ . . . . .	15498	20
Սղորեաց . . . . .	2659	10
Գրոց, լրագրոց եւայլն եւ վարժարանի դասատուաց . . . . .	15052	10
Տպարանի . . . . .	7614	
Այգւոյն . . . . .	1917	50
Պարգեւի եւ ողորմութեան . . . . .	2212	10
Բժշկաց, դեղաց եւայլն . . . . .	1490	20
Զդեատուց եւ ազանեկեաց . . . . .	22482	
Շինութեանց . . . . .	25651	15
Կահուց եւ կարսեաց . . . . .	22808	
Երթեւեկութեանց . . . . .	17277	5
Վառելեաց . . . . .	1151	20
Մառանի . . . . .	51175	20
Պարտիղի բանջարոյ . . . . .	2294	
Մանր օրականաց . . . . .	1759	20
Մաքսի . . . . .	588	50
Զէն եւ շահու . . . . .	5006	20
Ի նուիրակութեան ծախք եւ մաս մը Տաճարին սպարուց վճարք . . . . .	11407	10
Ներքին սպասաւորաց տարեկաններուն . . . . .	11056	
Պատահական եւ այլեւայլ ծախքեր . . . . .	4405	50
	278064	



ըստ յանձնարարութեան Պատուարժան Խորհրդոյդ, կը փութայ գրաւոր հաղորդել յիշեալ հաշուոց մէջ պատահած բացատրութեան կարօտ կէտերը :

Մասնաժողովս նախ տեսնելով յիշեալ քառամեայ հաշուոց խառնաշփոթ շարքը, հաշուակալի մը միջոցաւ կրկնատուժարի վերածնց, զոր իւրաքանչիւր տարւոյն ելեւմտից հաշուեցոյցերը ուրոյն ուրոյն պատրաստած Խորհրդոյդ կը մատուցանէ :

Ահաւասիկ յիշեալ հաշուոց մէջ բացատրութեան կարօտ եւ բացատրելի կէտերը :

— 1869 Յունիս 27 ին, 5800 տրամ արծաթ ծախուած է 11800 դր. ի ճիշտ այն թուին, որ վանուց սնտուկին մուտքն 28880 դր. եւ եւքն 19684 դր. ըլլալով. 9196 դր. պատրաստի դրամ կերեւար սնտուկին մէջ եւ բնաւ հարկ չկար արծաթեղէն ծախելու :

— 1869 Օգոստ. 3 ին, « Մշոյ առաջնորդական Տղայք. Գրիգորիս վարդապետին 550 դր. վճարուեցաւ », կ'ըսէ. ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար վճարուիլը յայտնի չէ :

— 1869 Օգոստ. 5 ին « Երեմիա եպիսկոպոսին վճարուեցաւ իր պահանջէն 5020 դր. » կ'ըսէ. չէ նշանակուած թէ ե՞րբ պարտատէր եղած եւ փոխ տուած է այդ ստակը, եւ կամ ի՞նչ պարտք է որ վճարուեր է, եւ թէ որո՞ւ կը վերաբերի այդ պարտքը. վանքի՞ն թէ այլու՞մ, չ'երեւիր :

— 1869 Օգոստ. 16 ին, « Յանուն գանձաւանի հաւատարմաբանից բաժնուեցաւ 1370 եւ 770 դր. » կ'ըսէ. ինչո՞ւ եւ մի՞թէ սովորութիւն մը կա՞յ այդպէս. ուրիշ տարիներուն մէջ նշանակուած չէ :

— 1869 Սեպտ. 30 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ, « Այս տարուան վանքին շինուածոց գումարը 15253 դր. » : 4-5 դր. ի մասնաւոր գումարներ եւ շինութեան համար ծախքեր շոկ շոկ նշանակուած ատեն, ի՞նչպէս կ'ըլլայ որ այսչափ խոշոր գումար մը մէկէն կը նշանակէ : Նմանապէս 1869 Սեպտ. 30 ին « Վանքին ցորեան եւ խոտ քաղողաց եւ տերեւ կորոզաց վարձուց գումարն է 9154 դր. » կ'ըսէ : Այս թուակամին նաեւ կը գրէ « Զմեար Ս. Հայրիկին կարնոյ մէջ բրած ծախուց գումարը, որ իր կարգին գրուիլը մոռցուած էր 2000 դր. » որոնք բացատրութեան կը կարօտին եւ կասկածելի են :

— 1869 Սեպտ. 30 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ, « Գարնանէ մինչեւ այսօր կարինէն առնուած բաներուն եւ տեղս փոխադրուածն գին 12155 դր. : Նմանապէս « Ժամարարներուն տրուած ժամուցներուն գումարն 800 դր. » Գարձեալ « Առաջնորդարանի մանր մուկն ծախուց եւ առհասարակ տրուած պարգեւներու գումարն է 2000 դր. » նմանապէս « կարնեցի հիւան ուստա Մաթոյին օրականներն 1050 դր. » : Ասոնք ամէնքն ալ խոշոր գումարներ են, եւ միեւնոյն օրուան մէջ ծախք արձանագրուած են, եւ ամենքն ալ կասկած կրնան վերցնել, թէ մի՞ գուցէ սնտուկին մէջ գտնուած պատրաստի դրամին քանակութիւնը անուղղակի կերպով կորսնցնելու համար հնարուած բաներ ըլլան :

— 1869 Սեպտ. 30 ին, կը գրէ « Այս տարուան շինուածոց ծախքերուն մէջ սխալմամբ մտած ըլլալուն զեղչ կ'ընեմ 2428 1/2 դր. » : Եղած այս զեղչը կասկածելի է, վասն զի՞ ինչպէս վերը կը տեսնուի, շատ մը խոշոր հաշուներ մէկ աւուր մէջ ծախուց կողմը նշանակած ատեն, սնտուկի մտից գումարէն (կամ լաւ եւս է ըսել պատրաստի ստակին գումարէն) աւելի նշմարելով, մտից եւ ելից գումարը հաւասարեցնելու համար վար իջած է, նշանակեալ 2428 1/2 դր. ի « աւելի անցուած » ծախուց գումարը :

— 1869 Սեպտ. 30 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ, « 82-85 տարւոյ մուգաթան կոփայ վանից վճարուեցաւ, ձեռամբ Ս. Հայրիկին 1000 դր. » դարձեալ կը գրէ « 85 տարւոյ մուգաթային մէկ մասը Ս. Հայրիկին արկղէն առաւ իր հետը տանելու 2000 դր. » :

— 1869 Հոկտ. 2 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ, « 85 տարւոյ մուգաթային մնացեալ մասը Ս. Հայրիկին ամբողջ յանձնուեցաւ 4500 դր. » :

Մասնաժողովս մուգաթայի վերաբերեալ այս գումարները հարկ տեսաւ հոս նշանակել ՚ի տեղեկութիւն ելեւմտից Հոգաբարձութեան :

— 1869 Հոկտ. 2 ին, դարձեալ սնտուկին ելից կողմը կը գրէ, « Ս. Հայրիկին աջահամբոյր նուիրեցաւ Պատրիարքութեան 1200 դր. » որ բացատրութեան կարօտ է :

— 1869 Հոկտ. 21 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ, « Վանքին շինուածոց, վարպետաց եւ բանւորաց օճակն վարձքեր տուինք 2122 դր. » : Երկրորդի է, թէ այս գումարը Սեպտ. 30 ին վերը նշանակուած 15000, 12000

եւ 9000 դր. ի գումարաց մէջ տրուած ըլլայ եւ հոս նորէն կրկնուած :

— 1869 Նոյմ. 16 ին, սնտուկին ելից կողմը կը գրէ. « Ս. Հայրիկի առանձին տալիքի կողմանէ տուինք Աղուանեանին 1000 դր. » բացատրութեան կարօտ է :

— 1869 Նոյմ. 21 ին, սնտուկին ելից կողմը գրուած է. « Պօլսէն եկած Վարազայ եւ Վանքի մէջ ծախուելիք գրքերուն քիրան եւ ծախք ձեռամբ Սարգիս աղայի 1024 1/2 դր. » : Երկրորդն Սրբազանի հաշուոյն Վարազայ եւ Մշոյ Ս. կարապետի վանուց մէջ ծախուելու դացած գրքերուն ձեռնապարհի ծախքը Ս. կարապետի վանուց սնտուկէն վճարուեր է. ի՞նչ պարտք ունի վանքը այդպիսի ծախք մը վճարելու :

Այս խառնաշփոթ եւ կասկածելի պարագայներով շինուած է 1869 Յունվար 1 էն մինչեւ 1870 Մայիս 5 վանուց սնտուկին ելեւմտից կողմերը հետեւեալ կերպով .

ՄՈՒՏԻՔ

Գարեգին վրդպ. ի ձեռամբ	
69 Յունվ. էն ց50 Սեպտ.	128589 դր.
Ակնցի Միսաքի ձեռամբ	
69 Հոկտ. էն 25 Հոկտ.	21479 »
Աւետիսին ձեռամբ	
69 Հոկտ. 24 էն 4 Մայիս 70	55901 »
	<hr/>
	185769 դր.

ԵԼՔ

Գարեգին վրդպ. ի ձեռամբ	
69 Յունվ. է ցՍեպտ. 30	128595 դր.
Միսաքի ձեռամբ, Հոկ. 1 էն-24	21479 »
Աւետիսի » Նոյ. 1 էն 70 Մյս. 4	51083 »
	<hr/>
	180962 դր.

1869 տարւոյն ելեւմտուքէն սնտուկը պատրաստ դրամ 2807 դր. որ 1870 Մայիս 4 ին սնտուկին մտից կողմը ճըշդիւ անցած է :

(Միայն 2080 դր. երկրորդն Ս. ի սնտուկը թողած ստակը, որ Սեպտ. 30 ին սնտուկին ելից կողմն ալ միեւնոյն խօսքերով անցած է. կենթադրուի թէ այս գումարն հոս իբր ծախք նշանակողին որկորը մնացած է :)

— 1870 մարտ 30 ին սնտուկին ելից կողմը

կը գրէ. « 22 հաս թուղթ մանէթ կարին դրկեցինք Հոյր Գարեգինին վանքին պէտք եղածն առնելու համար 550 դր. » : դարձեալ քիչ մը վարը 1870 ապրիլ 26 ին սնտուկին ելից կողմը կը գրէ. « վանքին համար կարինէն եկած այլ եւ այլ պէտքեր ձեռամբ ֆոխ. Գարեգին վարդապետի 556 1/2 դր. » :

1870 մարտ 30 ին 22 թուղթ մանէթով 550 դր. կարին Գարեգին վարդապետի զբրկուած է վանքին պէտք եղածն առնելու, եւ որ նշանակուած է ըստ օրինի սնտուկին ելից կողմը. բայց զարմանալի է որ նոյն պէտքերն առնուելէն զինի, անոնց գինը 556 1/2 դր. նորէն սնտուկէն առնուեր եւ ապրիլ 26 ին ելից կողմը նշանակուեր է. — ուրիշ բան չնշանակէր այս, եթէ ոչ 556 1/2 դր. սնտուկէն ուղղակի կերպով վերցնել :

— 1870 նոյեմ. 5 ին սնտուկին մտից կողմը կը գրէ. « Մշոյ Մովսէս աղայէն փոխ առնուած պարտք 12000 դր. » այն միջոցին փոխառուութիւն կը լինի, որ սնտուկը ստակ կայ, եւ այդչափ պարտք ընելու հարկ մը չկայ. ինչպէս կը տեսնուի նոյեմ. 5 էն վերջը եղած մանր մուկն ծախքերէն :

— 1870 դեկտ. 11 ին մտից կողմը կը գրէ. « Մշոյ Մովսէս աղայէն 1/10 1 տոկոսով պարտք 6250 դր. » :

— 1871 յունիս 10 ին սնտուկին ելից կողմը կը գրէ. « Պօլսէն մինչեւ վանքս գալու երեք անձանց նախուճ, ձիու քիրա, ուտելիքի եւ իջեւանի ծախք 2251 1/2 դր. » : 2 գիտցուիլը, թէ ով են Պօլսէն եկող 5 անձերը, ինչո՞ւ գացած են, վանքին մը գործին համար եւ ով կանչած է զիրենք :

— 1871 օգոստ. 27 ին սնտուկին ելից կողմը գրուած է. « 1100 դր. Մշոյ Առաջնորդ Գրիգորիս Վ. ին », եւ ինչ բանի համար վճարուած ըլլալը չէ նշանակուած : Նմանապէս շինուած թեան համար խոշոր խոշոր ծախքեր եղած են, բայց չը գիտցուիլը թէ ինչ են այդ շէնքերը :

— 1871 հոկտ. 19 ին սնտուկին ելից կողմը կը գրէ. « Պօլսէն Ս. Հայրիկէն զրկուած գարնոցի եւ թանգարանի համար գրեանք ձեռնապարհի ծախքովը 1859 դր. » : ինչ են այդ գրքերը որ թանգարանին համար զրկուած եւ ստակը առնուած է Ս. Հայրիկին կողմէն, վանքին սնտուկին այնպիսի մէկ ժամանակին, որ երկու օրն անգամ մի տակոսով փոխառութիւն



կրնեն եւ արծաթեայ անօթները հալելով կը ծախեն : Զարմանալի է նաեւ որ մէկ կողմէն Ս. Հայրիկ զիրք կը դրկէ Թանգարանին , մինչդեռ միւս կողմէն 2 հատ Հայկազնեան ընտիր բառագրքեր Գարեգին վարդապետ 400 զրշ. ծախեցի ըսելով իր հաշւոյն կը վերցնէ :

Սնաւատիկ 1870 մայիս 4 էն 71 նոյեմ. 24 սնտուկին մտից եւ ելից կողմերը հետեւեալ կերպիւ շինուած եւ գոցուած են .

ՄՈՒՏՔ

70 մայիս 3 էն 70 դեկտ. 18	
ձեռամբ Գարեգին Վ. ի	153554 զրշ.
Գեկտ 18 էն 71 նոյեմ. 24	
ձեռամբ Թադէոս Վ. ի	161212 »
71 դեկտ. 18 ին Գարեգին Վ. շահ կը թողու	1471 զրշ.
71 դեկտ. 24 Թադէոս	
Վ. շահ կը թողու	5550 1 2 7021 1 2
	521567 1 2

ԵԼՔ

70 մայիս 3 էն դեկտ. 18	
ձեռամբ Գարեգին Վ. ի	152568 1 2
70 դեկտ. 16 էն 71 նոյ. 24	
ձեռամբ Թադէոս Վ. ի	160827 1 2 = 515196

Մնացորդ զրամ	Ղրշ.	8571 1 2
--------------	------	----------

Այս 8571 1|2 զրշի գումարն որ 1871 նոյ. 25 ին սնտուկին հաշիւը վերստին բացուած առեւն փոխանակ ամբողջապէս (ինչպէս օրէնք է) մտից կողմը նախորդ տարուընէ պատրաստի ստակ ըսուելու , միայն 5550 զրշ. գրուած է , յորմէ 2831 զրշի գումար մը անյայտ եղած է առանց ուր մնալը յիշուելու :

— 1871 նոյեմ. 24 էն մինչեւ 72 դեկտ. 30 սնտուկին ելեւմտից կողմերը կը բաղկանան հետեւեալ կերպով :

ՄՈՒՏՔ

71 նոյեմ. 72 դեկտ. ամբողջ գումար մտից	զրշ.	167541 15
---------------------------------------	------	-----------

ԵԼՔ

71 նոյ. 24 էն 72 դեկտ. 30 ծխք.	151058 25
Պատրաստի զրամ	36482 30
եւ 36482 3/4 պատրաստի ստակ արկղի մէջ ըսելով 72 տարեկալիսն սնտուկը կը գոցէ :	

Այս 36482 3/4 զրշ. ի գումարն , որ ըստ օրինի 1872 յունվար 1 ին սնտուկին մտից գը-

լուիւր ամբողջապէս նշանակելու էր , ընդհաւ կառակն 1872 յունվար 1 ին սնտուկին մտից գըլուիւր կը դնէ . « 33145 զրշ. պատրաստ զրամ նախորդ տարուընէ արկղին մէջ մնացած » ըսելով : Սրկղին մէջ գտնուած 36482 զրուշի գումարն 33145 զրշի կիջնայ եւ 3357 զրշ կանեղեւութանայ :

— 1871 նոյմ. 25 ին սնտուկին ելից կողմը կը գրէ . « Գարեգին վրդպ. Փոխ. Հօր Վան երթալուն ճանապարհի ծախք արուեցաւ 1000 զրշ. » չգիտցուիր թէ Վանքին որ գործին կարգադրութեանը համար Գարեգին վրդպ. Վան գընացած եւ 1000 զրշ. ճամբու ծախք առած է , եւ վերադարձին ի՞նչ արդիւնք բերած է Վանքին սնտուկին :

— 1872 Յուլիս 25 ին , սնտուկին ելից կողմը կը գրէ . « 72 թուին մուգաթան զրկեցինք Ս. Հայրիկին , ձեռամբ Սարգ. ի 6000 զրշ. » :

— 1872 Հոկտ. 18 ին , սնտուկին ելից կողմը կը գրէ . « Վանքիս մարդոց ու ձիոց համար ըրած ծախքերս Վանայ մէջ երեք անգամին 1545 զրշ. » յորմէ կը հասկցուի թէ Փոխ. Գարեգին հայրսուրբը վանքին ձիաւորներն եւ մարդիկները հետն ունենալով Վան գացած է եւ այսչափ ծախք եղած է , բայց « երեք անգամին » ըսուած խօսքը ի՞նչ պիտի ըլլայ , քիչ մը վերը 72 Սեպտ. 27 ին սնտուկին ելից կողմը գրուած է « 5 զրշ. Սըլըգան երթալուս ցորենի համար ինծի ծախք » : Այս խօսքը վերի գրուածին բոլորովին հակասական է . Փոխ. Գարեգին վրդպ. 1872 Սեպտ 27 ին Սըլըգան գնացեր է ցորենի համար եւ 5 զրշ. ծախք ըրեր է . — 1872 Հոկտ. 18 ին ալ 1545 զրշ. Վանայ մէջ ծախք ըրեր է վանքին եւ մարդոց եւ ձիոց համար . յորմէ կիմացուի , որ Սեպտ. 27 ին Սըլըգան գացող Հայրսուրբն , 72 Հոկտ. 18 ին Վան եղած է :

— 1872 նոյմ. 21 ին սնտուկին ելից կողմը կը գրէ . « Պօլսեցի Մ. Անդրէասի մուրհակին հատուցած էր Ս. Հայրիկը ժառանգաւորացի Պօլիս տեղէս զրկեցինք 3000 զրշ. » : Այս Մ. Անդրէասն Ս. Կարապետի վանուց մէջ մեռած է , ու քովէն ելած ստակը վանքի սնտուկին մէջ աւանդ մնացած է , որ սնտուկին մտից մէջ գրուած չէ . յետոյ զրկուեր է Ս. Հայրիկին ձեռամբ , եւ հանգուցելոյն ժառանգորդաց յանձնուեր է , եւ որ զրկուած առեւն միայն սնտուկին ելից կողմը գրուեր է :

— 1875 Յունիս 25 ին սնտուկին մտից կողմը կը գրէ . « Գէորդ աղայի քով մնացածը առինք 749 զրշ. » ո՞վ է այդ Գէորդ աղան , ո՞ր կէ եւ ե՞րբ մնացած է այդ ստակը անոր քով եւ ի՞նչ հաշուէ . չգիտցուիր :

— 1875 Ապրիլ 8 ին սնտուկին մտից կողմը կը գրէ . « Փոխ արուած են ոմանց քով 2696 զրշ. » զարմանալի է որ փոխ արուած ըստակ մը սնտուկին մտից կողմը կը գրուի , փոխանակ ելից կողմը գրուելու . մանաւանդ թէ այս փոխ արուած ստակն արդէն 69-70 տարիներու սնտուկի ելից կողմը կայ , « 1000 զրշ. փոխ արուած Նախջեւանցիներու . 1000 զրշ. զիարէթի Ռէսչուկէին եւն. » եւ նոյն տարուց ելեւմտից մէջ հաշուոց անցած է : Արդ յիշեալ 2696 զրշ. ն եթէ նոյն փոխ արուածներն է , 75 տարուց սնտուկին մտից կողմը չկրնար անցնիլ , քանի որ առնուած չէ եւ առնուած չ'ըլլալն ալ յայտնի է « փոխ արուած են ոմանց քով » խօսքերէն . իսկ եթէ այն չէ , ու նոր փոխ արուած է , պէտք էր ելից կողմը նշանակել : Աւելի զարմանքը հոս է , որ սոյն 2686 զրշ. ի գումարը 1875 Ապրիլ 11 ին սնտուկին ելից կողմն ալ կը գրէ սա խօսքերով . « 2697 զրշ. այլեւ այլ անձանց վրայ առնելիք եւ փոխ » :

Քառամեայ հաշուոց սոյն օրինակ շատ մը հաշուական խօշոր եւ կամաւոր զարտուղութիւններէն (զոր մինչեւ հոս մի առ մի ցոյց տուինք մասնաւորապէս) յայտնապէս կերելի , որ սոյն քառամեայ հաշիւները բացատրութեան կարօտ եւ կասկածելի են :

Սակէ զատ ուշադրութեան արժանի է Պօլսոյ Վէլիք խանի մէջ Ս. Կարապետի ստացուածքն եղող 2 սենեկաց վարձուց հաշիւն , որ բնաւ այս քառամեայ հաշուոց մէջ արձանագրուած չէին , եւ Միաբանութիւնը 15 տարուան ամբողջ վարձք կը պահանջէ այժմ՝ նախորդ Վանաօր եւ նորա Փոխստորգին օրէն :

6 Յունիս 1874	Մնամբ յարգանք
Անգամը ֆինիչ Մանուստոզովոյ .	
(Ստորագրութիւնն է)	
ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏԻԶ ԱՄԲՈՍԻՍՍ ՎՐԴՊ.	
ՓՕԹԻԿԵԱՆ ԽԵԶԻԿԵԱՆ ԻՍՊԵՆՏԵՐԵԱՆ	

Իսկ Խորհուրդս Գարեգին վարդապետին այս հաշուոց մասին տուած պատկապատ պատաս-

խանները տեսնելով հետեւեալ որոշումը տրուաւ , եւ հաղորդեց իրեն :

« Արժանապատիւ Տ. Գարեգին Վարդապետ Սրբաանձառեանց Նախկին փոխ. Վանահայր Ս. Կարապետի վանիցն Մշոյ .

« Վանօրէից խորհուրդը Մայիս մէկի նիստին Մշոյ Ս. Կարապետի վանուց Զեր փոխ. վանահայրութեան օրով եղած քառամեայ հաշուոց մասին տուած բացատրութիւննիդ Մայիս 10 նիստին մէջ նկատողութեան առնելով , սա որոշումն ըրաւ թէ՛ որովհետեւ վանուց միաբանութեան ընդհ. ժողովը նոյն քառամեայ հաշուեթղթերը զրկած առեւն , միայն վերջին երեք ամսոց հաշիւներն ընդունած եւ առաջինները չ'ընդունելէ զատ , անոնց պարբերաւորութեանց վրայ ակնարկութիւններ կ'ընէր Խորհրդոյս իր 7 մարտ 1874 թիւ նամակաւ . եւ որովհետեւ Խորհուրդս ակն յայտնի տեսաւ անոր մէջ հաշուոց կասկածելի ըլլալու հանգամանքները , հետեւաբար Խորհուրդս զԶեզ պատասխանատու կը ճանչնայ Զեր քառամեայ պաշտօնավարութեան միջոցին Ս. Կարապետի վանուց ելեւմտական հաշուոց . զոր պարտական էք տալ Խորհրդոյս . առանց այս օրինաւոր հաշուէտուութեան կասկածելի կը մնաք իբրեւ խուսափող հաշուէտուութեան :

« Այս որոշում հաղորդելով Զեր Սրբութեան : »

15 Մայիս 1874 խորհրդարան. Վալաթիւն ]

Գարեգին վարդապետ այս որոշման գէժ հետեւեալ պատասխանը զրկեց :

Առ Գիւան Վանօրէից խորհրդոյ Ազգային Վարչութեան .

Տեսնք .

Համար 170 Մայիս 15 թիւ առ իս գրած պաշտօնական նամակաւ մը կը ծանուցանէք թէ՛ Սր. Կարապետի վանուց հաշուոց մասին , այսինքնն , իմ փոխանորդութեանս շրջանին տուած բացատրութիւնս Վանօրէից խորհուրդը նկատողութեան առնելով զիս պատասխանատու կը ճանչնայ այն հաշուոց եւ պարտական՝ տալ հաշիւ Խորհրդոյդ : Եւ թէ առանց այս հաշուէտուութեան կասկածելի կը մնամ ես , իբրեւ խուսափող հաշուէտուութեան : Պատճառը .

Ա.—Վանուց միաբանութեան Ընդհ. ժողովը հաշուէթղթերը զրկած ատեն միայն վերջին երեք ամսոց հաշիւներն ընդունած եւ առաջինները չ'ընդունելի դատ անոնց պարխնաւորութեանց վրայ ակնարկներ ըրած է :

Բ. Վանու զի Խորհուրդը ակն յայտնի տեսած է, անոր մէջ հաշուոց կասկածելի ըլլալու հանգամանքները : — Ասոնք Ձեր գրածներն են :

Իսկ ինչ էին իմ բացատրութիւններս. անոնք երբէք չ'յիշելով այս գրութեան մէջ, ներքին լինի ինձ յայտնելու թէ, ես կը կասկածիմ որ իմ տուած բացատրութիւններս կըրճատ կամ փոփոխած արձանագրած լինիք. ապա թէ ոչ հարկ էք մնար այս վերջին գիրն առ իս ուղղելու :

Ես կը կարծեմ որ Վանուէից խորհուրդը Հրահանգի օրէնքով կը վարէ իր պաշտօնը եւ ըստ այնմ կ'ընէ իր որոշումները, ուստի Հրահանգին գիմնեք պահ մը : — Վանուց միաբանութեան Ընդհ. ժողովոյ պաշտօնն է, Գլ. Ա. յօդ. Ե. Մասն Ե. «Վանուց ներքին եւ արտաքին կալուածոց եւ ամենայն ստացուածոց եւ հաստութից հաշիւն անել, ամեն տարի որոշեալ ժամանակի մէջ եւ հաշուեցոյցը ստորագրելով զրկել Կեդր. Վարչութեան» :

Գլխ. Բ. յօդ. 22 «Տնօրէն խորհրդոյ պաշտօնն է ընել վանուց մատակարարութիւնը : Գլ. Գ. յօդ. 54 «Վանահօր եւ վանական Տնօրէն խորհրդոյ անմիջական հսկողութեան ներքեւ է վանուց անտուկը, եւ վանահայրը անոնց Տնօրէն խորհրդոյ գիտութեան ծախք չի կրնար ընել» :

Յօդ. 57 «Վանահայր կ'ամբաստանուի Վ. Տնօրէն խորհուրդէն կամ միաբանութեան Ընդհ. ժողովէն, եւ կամ իր գաւառի Վարչութեան : Ամբաստանողը Կեդր. Վարչութեան կը ծանուցանէ իր ամբաստանութիւնը» :

Յօդ. 58 «Կեդր. Վարչութիւնը նախ բացատրութիւն կը պահանջէ. եւ երբ գրաւոր հաղորդակցութիւնք չ'բաւականանան ինչպիսի պարզելու եւ լուծելու, Կեդր. Վարչութիւնը քննիչ կը զրկէ նոյն վանքը եւ անոր տեղեկագրին վրայ իր վճիռը կուտայ» :

Գլ. Գ. յօդ. 42. «Կեդր. Վարչութիւնը ի հարկին տեսուչ կը զրկէ նոյն վանքը. եւ եթէ (եղած տարածայնութիւնը կամ ամբաստանութիւնը) ստուգուի, առաջին անգամ ի կանոնապահութիւն եւ ի կարգ կը հրաւիրէ, եւ ե-

թէ դարձեալ անուղղայ մնան, երկրորդ անգամ ըստ առաջնոյն քննելէ եւ «...էլէ ետքը զանոնք կը դադարեցնէ իրենց պաշտօնէն» :

Արդ՝ ըստ 5 դ յօդուածոյն, ես ներկայացուցի իմ գործակից Տնօրէն ժողովով մէկտեղ վարած չըջանին հաշուեցոյցները, այն օր՝ երբ այս նոր Հրահանգը գործադրելով Ընդհ. ժողով կազմած էի օրինաւորապէս. թէպէտ ես եւ նախկին Տնօրէն ժողովն իրաւունք ունէինք ատոնց հաշիւ չտալու. քանզի իրենց կազմութեանն առաջ եղածներուն քննութիւն ընելու արածութիւն մը չկար ի Հրահանգն. այլ օրինաւորութիւն համարած էինք մեր Սրբազան վանահօր զրկել հաշիւը, որպէս զի ըստ ամենայն օրինաւորութեան Վանահայրն ալ ներկայացնէր Կեդր. Վարչութեան :

Բայց որովհետեւ ո՛չ ես եւ ո՛չ Տնօրէն ժողով կասկած մը չունէինք հաշուոց մասին. ուստի անկեղծութեամբ այդ հաշիւները նորակազմ Ընդհ. ժողովոյն ներկայացուցինք : Ճշմարիտ է որ Ընդհ. ժողովոյ մէջէն եղան բողոքողները, բայց չեղան եւ ոչ մի կէտ ապացուցանողները : Եւ որովհետեւ ըսած էինք Ընդհ. ժողովոյն թէ մեր հաշիւները մինչ 1875 Յունվար 1 զրկուած են Սրբազան Վանահօրը, Ընդհ. ժողովն ալ արձանագրութիւն մը չինեց այսպէս «1869, Հոկտ. 1 էն սկսեալ մինչ ի 1875 Դեկտ. վերջը նախորդ ժողովը Արժ. փխնրդ. Գարեգին վարդապետին հետ Սրբզն. Պատրիարքին տուած է իր հաշիւներն, որոց մասին ըսելիք մը չկայ : Իսկ ներկայ տարւոյս, այսինքն՝ 1875 Յունվարի սկիզբէն մինչ ապրիլ 10 Ընդհ. ժողովս կը պահանջէ հաշիւներ քննել եւ ստորագրել : 1875 Ապրիլ 16 : Ի Վ. Ար. Կարապետի «սորաբերութեան» 10 Հարդարաց» : Սոյն գիրը ստորագրութեամբք հանդերձ իմ քովս կը մնայ : Ապա այդ մասնահաշիւը տեսան, վաւերացուցին եւ հետեւեալ արձանագրութիւնը գրեցին Ընդհ. ժողովով : «...Վանուց Ընդհ. ժողովը նախորդ Տնօրէն ժողովէն եւ Փոխանորդ Տ. Գարեգին վարդապետէն միայն ներկայ տարւոյս սկիզբէն, այսինքն՝ 1875 Յունվար 1 էն մինչեւ Ապրիլ 10 եղած հաշուետւոյնները առաւ ուշիուշով քննեց, վաւերացուց եւ վանից արկղէն 22098 ՊՐՆ ընթացիկ զբամ առնելով յանձնեց նորընտիր ժողովոյն եւ Փոխանորդին հսկողութեան : 2626 ՊՐՆ ալ արկղէն դուրս փոխադրուած այլեւ այլ անձանց

«պարտավորակները եւ ցուցակներ ստանալով «վերստին յանձնեց ժողովոյն, եւ վերոյիշեալ «հաշուետուարը վաւերացնելով իրեն խորին «չնորհակալիքը յայտնեց՝ թէ Գարեգին վարդապետին եւ թէ նախորդ ժողովական Ս. Հարց» :

Ասոնք նկատողութեան առնելով Վանուէից խորհուրդը, կը յուսամ որ զիս «կասկածելի» չ'թողուր, եւ թէ ինչ է պատճառը, որ միայն երեք ամսուանը ընդունած եղեր են, սոյն բացատրութեամբք պարզ կիմանայ եւ եթէ այս միաբ. Ընդհ. ժողովն մի եւ նոյն անձինքն են, որ Մարտ 7 թիւ նամակաւ մը հաշուոց ապօրինաւորութեանց վրայ ակնարկութիւններ կընեն եղեր առ Վ. Խորհուրդը. Խորհուրդը իրենք եւ իրենց ակնարկութիւնները լաւ թող ճանչնայ, եւ ի դուր վճիռ չ'արձակէ ինձ համար ըսելով «հաշուետուութեան խոյս կուտայ» :

Հրահանգը մեզ չ'եկած ու չ'գործադրուած մենք արդէն Տնօրէն ժողովոյ հետ մէկտեղ կընէինք Վանուց մատակարարութիւնը, եւ մեր ու Տնօրէն ժողովոյն անմիջական հսկողութեան ներքեւն էր վանուց անտուկը, եւ երբէք անոնց Տնօրէն խորհրդոյ գիտութեան ծախք չեմք կրցած ընել. ինչո՞ւ անոնց Տ. Խորհրդոյ մասնակցութեան մի միայն զիս պարտական կը ճանաչէք, երբ անոնց Տնօ. Խորհրդոյ ծախք չեմք ըրած : — Հրահանգ յօդ. 22 և 54 : Այն ինչ Տ. Խորհուրդն գիտնալով իր պարտականութիւնը ինչպէս գործակցեր, նոյնպէս եւ ինձ հետ ըստորագրեր է հաշուոց պատասխանատուութեան եւ այս հաշիւը միշտ պատրաստ է ինձ հետ տալու, թէ Սրբզն. Հայրիկին է՛եղեր, թէ Վ. Խորհրդոյն եւ թէ քննչի մը, ինչպէս նաեւ վանուց Ընդհ. ժողովոյն :

Ամբաստանուած եմ ես. ամբաստանութիւնը հասած է Կեդր. Վարչութեան. — Հրահանգ յօդ. 57 : Կեդր. Վարչութիւնը նախ բացատրութիւն ուղեց, եւ ես չ'կրցայ ինչպիսի պարզելու եւ լուծելու. — Հրահանգ յօդ. 58 : Վարչութիւն քննիչ մը զրկեց այդ վանքը եւ ստուգեց յանցանքս, ի կարգ եւ ի կանոնապահութիւն հրաւիրեց եւն. եւն. Հրահանգ յօդ. 42 : — Ո՛չ երբէք, այլ կուտայ իւր վճիռը անոնց այս ամենայն պայմանի, այն ինչ ինքն ուրիշներուն կանոն զնելու պաշտօն կը վարէ :

Թերեւս ըսէ ինձ Վ. Խորհուրդը թէ դու վանահայր չ'էիր, որ այդ պայմաններով վար-

ուէինք քեզ հետ : Ես աղէկ : Արդէն իմ ըսածը ալ այդ էր Մայիս 1 ին Խորհրդոյն ի ներկայութեան ըսի, ես վանահօր Փոխանորդ եմ. Վարչութեանն ու միաբանութեանն վանահայր կը ճանչցուէր Ս. Հայրիկին, ես ըստ օրինի իմ պատասխանատուութիւնս վանահօր կուտայի. եւ վանահօրէն ոչ միայն իմ չըջանիս այլ իբր 12 տարուան հաշիւն ալ կ'ուղէիք, հետեւաբար ատոնց մէկ մասն էր իմ չըջանս ալ : Ըսի դարձեալ, եթէ ինձմէ զատ հաշիւ առնէք, հարկ կ'ըլլայ որ Ս. Հայրիկին վանահայր կարգուած օրէն ամեն միջոցի մէջ գտնուած փոխանորդներէն ալ զատ զատ հաշիւ առնէք, եւ այն ժամանակ ալ ինչ կը մնայ Ս. Հայրիկէն պահանջելիդ. Իսկ Սրբզն. Հայրիկէն ամբողջ վանահայրութեան չըջանին հաշիւներուն համար ալ ըսի թէ, եթէ միաբանութեանն բողոքած են, կամ Խորհուրդը «Ակն յայտնի դիտած է հաշուոց մէջ կասկածելի ըլլալու հանգամանքները» պէտք է Կեդր. Վարչութիւնը Տեսուչ մը զրկեր վանքը, ի ներկայութեան ամբաստանողաց եւ ամբաստանելոյ — մենք ալ կ'երթանք վանք — այդ կասկածելի կամ ամբաստանեալ կէտերը քննուին, ապացուցանելու պէտք եղածներն ապացուցուին. քանզի գնած, շինած, մխտած ինչ եւ իցէ իրերը, ու ժխտելու կամ հաստատելու պէտք եղած անձինք եւ պարագայք հոն են : Ես եւ ըսիք ինձ թէ՛ այս հաշուետուարները ձեր տուածներուն ճիշդ օրինակն են. ըսի անոնց նախազարգացիկն հետ համեմատելու ինչպէս կրնամ գիտնալ թէ անոնք են կամ ճիշտ են :

Ասոնք էին, եւ ասոնք պիտի լինին իմ խօսքերս : Այն վանքի նեղութեան եւ տառապանաց օրերու մէջ ամենայն անձնազոհողութեամբ ծառայելէ՛ գինի, կըր անոր պարտքեր վճարուեցան, ստակ աւելցուցինք, եկեղեցին, դպրոցը, թանգարանը, կան կարասիները վախճացուցինք, ճոխացուցինք, նոյնպէս եւ անոր անտեսական մասը. այսօր նորընտիր Ս. Վանահայրը կերթայ պատրաստական պաշտօնատեղի մը, եւ զիւրութեամբ պիտի համբաւ ըստանայ, ուրիշի դառն քրտինքով հանդերձեալ ասպարիկն մէջ, եւ այն՝ անոնց օրինաւոր Ընդհ. ժողով կազմելու եւ քուէարկելու, հանրագրութեամբ մ'ուղելով վանահայր : Թող երթայ Աստուած իր հետ :

Բայց Վ. Խորհուրդը ո՛չ միայն չընենց,

չճանչցաւ մեր ծառայութիւնը, այլ հակառակորդաբար սկսաւ եւ ցայսօր նոյնպէս կը շարունակէ :

Ո՛վ է, որ կոտոր կոտոր հաշիւներ կը հանէ տուժարէն եւ քնածին բացատրութեամբ հրատարակել կուտայ Հայրենիք լրագրին . կարծես թէ այս մասին անոր Խմբագիրը Խորհրդոյդ բերանն է կամ Խորհուրդդ զայն կը խմբագրէ : Միթէ արդարութիւն իսպառ կը հալածուի : Ես գիտեմ համբերել . վասն զի Աստուած կայ : Ես գիտեմ համբերել . վասն զի կը հաւատամ արդարութեան : Ես պէտք է համբերեմ . վասն զի Սրբոյն Հայրիկին երախտագէտ եւ հաւատարիմ մնալուս համար է ասոնք կը կրեմ , եւ խնձի ալ փառք կը գրեմ :

« Եթէ զճանուաճէն բեհեղղերուդ կոչեցին որչափ եւս առաւել զընտանիս նորա : »

1874 Մայիս 21 Ն. Սրուանձտեանց ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐՉՈՒԹԵՏ

Խորհուրդս նկատելով որ վերջին անգամ իր տուած որոշման դէմ բողոքածեւ զիտողութիւններ պարունակող եւ անվայելուչ լեզուով զրուած սոյն նամակը , զոր ըստ օրինի պէտք էր Վարչութեան ներկայացնել , իրեն չէր վերաբերեր , եւ անտեղի պատճառանքներով հաշիւ տալէ խոյս տալ կուզէր . անցուց ի շարս անպէտ թղթոց , եւ ըստ նախորդ որոշման դարձեալ զԳարեգին վարչապետ հրաւիրեց ի հաշուէտուութիւն հետեւեալ զրութեամբ :

« Արժ. Տ. Գարեգին վրդպ. Սրուանձտեանց « Վանօրէից խորհուրդն ի պատասխանի իւր Մայիս 15 թուականաւ պաշտօնադրոյն , ստացաւ ձեր Մայիս 21 թուականաւ նամակը , զոր իրեն վերաբերեալ չնկատելով ուշադրութեան առնուլ արժան չդատեց . եւ ի տեղեկութիւն կը ծանուցանէ Ձեզ » :

27 Մայիս 1874 Խորհրդարան Ղալաթիոյ

Մինչեւ ցարդ Գարեգին վարչապետն ոչ Խորհրդոյս որոշման վրայ կրցաւ վերաքննութիւն պահանջել Քաղաքական ժողովէն , եւ ոչ ներկայացաւ իր հաշիւները Խորհրդոյս տալու :

Իսկ Խորհեան Սրբազանէն հաշուոց մասին բնաւին պատասխան մը չ'ստացանք :

Վանօրէից Խորհուրդն ի նիստ Բ. Գ. Գ. եւ Ե. Օգոստ. 1 էն ցՍեպտեմբեր 11 առաջնորդութեանց եւ վանահայրութեանց կրկնակի պաշտամանց մէկմէկէ բաժանման սկզբունքը երկար խորհրդակցութենէ եւ վիճաբանութենէ զկնի , վանօրէից յառաջադիմութեան օգտակար դատելով ընդունած եւ վանօրէից Հրահանգին մէջ անցնելով Վարչութեան խառն ժողովէն ալ վաւերացուցած եւ ըստ այնմ քանի մը վանքերու վանահայրութիւնները հետզհետէ բաժնել ձեռնարկած է . ինչպէս կը տեսնուի Համարատուութեանս 4. երեսին մէջ : Այսպէս ալ նկատելով , որ միացեալ վանահայրութեանց զրուութիւնն ալ միօրինակ արդելք է վանօրէից յառաջադիմութեան , եւ վանահարց իրենց պաշտօնատեղիէն երկարժամանակեայ բացակայութեամբ վանօրէից շատ վնաս կը պատճառէ , եւ զանոնք ապարդիւն վիճակի մէջ կը դնէ . ինչպէս եղած են Մշոյ Ս. Կարապետ եւ Վարազայ երկու հոշակաւոր վանքերը . որոշեց թէ միացեալ վանահայրութեանց բաժանման եւ թէ վանահարց իրենց պաշտօնատեղիէն չհեռանալու պէտքը : Եւ առաջարկեց Ազգ. Վարչութեան , ծանուցանելով միանգամայն թէ Խորհեան Մկրտիչ սրբազան իբրեւ ընդ միաբան Վարազայ , անոր վանահայր կրնայ մնալ , եւ թէ Մշոյ Ս. Կարապետի միաբանութիւնը անընդհատ կը բողոքէ Խորհն Սրբազնութեան Մշոյ վանահայրութեանը դէմ , որ անոնց իրենց կամայն ու հաճութեանը եղած է :

Ազգ. Վարչութիւնն առ Խորհուրդս դրած 326 թիւ պաշտօնադրոյն մէջ միացեալ վանահայրութեանց բաժանման զրութիւնն ընդունած եւ Մշոյ Միաբանութեան կողմանէ արդէն եղած ընտրութեանը համաձայն Տ. Մամբրէ Ս. Արք Եղիսկոպոսի Մշոյ Ս. Կարապետի վանահայր ընտրուած եւ Վարչութեան կողմանէ հաստատուած ըլլալը կը ծանուցանէր . որոյ վրայ Խորհուրդս ի նիստ 4 Մայիս 1874 հետեւեալ պաշտօնագիրն յղեց յիշեալ վանուց Միաբանութեան եւ նորընտիր Գեր. Ս. Վանահօր :

« Գերապատիւ նորընտիր Վանահայր եւ համեատակրօն միաբանութիւն վանիցն Ս. Կարապետի Մշոյ .

« Երկար տարիներէ հետէ Մշոյ Ս. Կարապետի վանուց բարեկարգութիւնը խնդիր եղած է Ազգին համար : Զանազան առիթներով Ազգը

դորա բարեկարգութեան պարագած է . սակայն ցաւ է ըսել , որ հակառակ Ազգին բոլոր ջանից ու ակնկալութեանց վանքը ցայսօր չը բարեկարգուեցաւ , եւ ոչ միով իւրիք ծառայեց Ազգին . տարիներ եղած են , յորում վանքից վանահայրութիւնը վիճակին առաջնորդութեան հետ կապուեր , եւ ժամանակ էղեր է , որ այս կապը կիսով մասամբ քակուելով վանքը զատ վանահայրով եւ վիճակը զատ առաջնորդով կառավարուեր են : Մտ ժամանակներս Վարազայ վանուց վանահայր Ամեն. Խորհեան Սրբազան իր Վարազայ վանուց վանահայրութեան հետ , իր վրայ միացուցած էր նաեւ վանուցը վանահայրութիւնը : Աւելորդ չէ ըսել , թէ Կեղրոնական վարչութեան Վանօրէից խորհուրդն իր պաշտօնավարութեան միջոցին վանուցը բարեկարգութեան համար քանի մը նիստեր զոհած , եւ վանուցը անցեալ ու ներկայ պատմական անցքերը նկատողութեան առնելով գտած է , որ պահանջեալ բարեկարգութիւնը՝ վանուցը վանահայրութիւնը վիճակին առաջնորդութենէն եւ Վարազայ վանուց վանահօր միացումը քակելով միայն յառաջ կրնայ գալ . ուստի առ այս ազգային Կեղրոնական Վարչութեան տեղեկագրելով ըստ տրամադրութեան սահմանադրութեան , այդ կրկնակի վանահայրութեանց միութիւնը բաժնել , Վարազայ վանքը իր ընդի վանահայր Խորհեան Սրբազանին վանահայրութեան ներքեւ թողով , Մշոյ Ս. Կարապետի վանուց համար նոր վանահօր մը ընտրութիւնը խնդրած էր : Այս անգամ Կեղր. բարեխնամ Վարչութեան խառն ժողովը Վ. Խորհրդոյ առաջարկութիւնը նկատողութեան առնելով , ըստ խնդրոյ Միաբանութեան Գեր. Տ. Մամբրէ եպիսկոպոսն Մշոյ Ս. Կարապետի վանուց վանահայր կարգեց :

« Արդ , Վանօրէից խորհուրդն կը հրաւիրէ զՁեզ , որ վանուցը նկատմամբ Ազգին ունեցած բազմամեայ փափաքներն ու յոյսը պսակել փութայք . առ այս անաւտիկ կը ներկայանաք , վանական Հրահանգէն չորս օրինակ , որոյ անթերի գործադրութիւնը կատարելու պարտաւոր էք՝ Ս. Վանուցը դպրոցի վիճակը անմիջապէս կանոնաւորելով , յորում 40 հատ ժառանգաւոր ուսանողք պէտք է անպակաս գտնուին . որոց հանդերձի ուստեստի եւ ննջարանի ամեն պէտքերը պարզ եւ մաքուր կերպով պիտի մատակարարուին Վանքին մտուկէն » :

- « Այս 40 ժառանգաւոր մանկանց բաշխման ցուցակը ըստ այնմ ըլլալու է .
- 20 Տղայք ՚ի դաշտէն Տարօնոյ
- 2 » ՚ի Խնուսայ
- 4 » ՚ի Պուլանլիսայ
- 4 » ՚ի Նարմանայ , Սպերէ եւ ՚ի վիճակացն
- 2 » ՚ի Մօսկանայ
- 2 » ՚ի Կարնոյ եւ ՚ի Բասենայ
- 2 » ՚ի Կեղիէ
- 2 » ՚ի Սղերգէ
- 2 » ՚ի դաշտէն Երրակայ

« Աւելորդ չ'համարիր Խորհուրդս յայտ առնել Ձեր Սրբազնութեան եւ Պատուարժան Մ. Ուլստիդ , որ մեծ հոգ պէտք է ունենաք նաեւ վանուցը մատակարարութեան եւ ելմտական հաշուոց օրինաւորութեանը , վարուելով միշտ ըստ պահանջման Վ. Խորհրդոյ եւ ըստ տըրամադրութեան Սահմանադրութեան եւ ներկայեալ Հրահանգին : Նմանապէս ամեն տարեգրլխոյն պարտաւոր էք անխափան վանուցը հաշիւները պարզ տուժարի ձեւով մանրամասնօրէն Կեղր. Վարչութեան ներկայացնել , լիով տեղեկութիւններ տալով նաեւ վանուցը ներքին վիճակին վրայ :

« Բաց յայցանէ մինչեւ յառաջիկայ նոր տարին՝ 1875 թուականը պարտիք վանուցը ներքին կանոնադիր մը եւ դպրոցական ծրագիր մը պատրաստել , Կեղրոնական վարչութեան վաւերացմանը եւ հաճութեանը ներկայացնելու համար : Եւ ինչպէս Ս. Երուսաղէմի եւ Արմաշու վանքերէն ամսաթերթ մը կը հրատարակուի . նմանապէս ամսաթերթ մը եւս Վանքէք հրատարակուի անհրաժեշտ է 1875 յունվար ամսէն սկսեալ . ուստի տպագրական հարկաւոր պատրաստութիւնները հոգալու էք այժմէն :

« Վանօրէից խորհուրդն քաջայոյս է , որ ներկայ հրահանգներն անթերի գործադրել կը փութայք միակամ եւ միախորհուրդ՝ Վանահայր եւ Միաբանութիւն իրարու եղբայրաբար անջակցելով . եւ կը յուսամք որ այս վերջին անգամ վանական Միաբանութիւնը Վանահօր հետ մէկտեղ Ազգին փափաքանաց համապատասխանիէ չի հեռանար , եւ որով չ'ստիպէր զՎարչութիւնն անողոք դատաւոր կացուցանելու իւր դէմ » :

3 Մայիս 1874 Խորհրդարան Ղալաթիոյ

Է.

ՅԱՆԿ ԹՈՒՐԳԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՆՕՐԷԻՑ

ԱԿՆ	1. Ս. Փրկիչ	Վանահայր	Դանիել վարդապետ
ԱՐՄԱՇ	2. Չարխափան Ս. Աստուածածին	»	Խորեն եպիսկոպոս
ԲԱԲԵՐԳ	3. Ս. Գրիստափոր	»	Մանուէլ վարդապետ
ԲԱԼՈՒ	4. Ս. Խաչ	»	Ստեփան վարդապետ
	5. Գաղղրահայեաց Ս. Աստուածածին	»	Գրիգոր վարդապետ
ԲԱՂԷՇ	6. Ամրաջու	»	Տ. Պողոս քահանայ
	7. Աւելյու Ս. Աստուածածին	»	Վարդան վարդապետ
	8. Գոմոյ Ս. Աստուածածին	»	Ահարոն վարդապետ
	9. Խնդրակատար Ս. Աստուածածին	»	Քահանայ ոմն
	10. Մաճկոնից	»	Վարդան վարդապետ
	11. Պոսայ Նարեկու	»	
	12. Ս. Թովմայ առաքեալ		
ԳԱՂԱՏԻԱ	13. Ս. Աստուածածին		
ԵՒԵՍԻԱ	14. Ս. Սարգիս		
ԵՐԶՆԿԱ	15. Կայրափոսի Ս. Յակոբ		
	16. Մթաւորի Ս. Կարապետ		
	17. Շողակաթ Ս. Աստուածածին		
	18. Ս. Գէորգ	»	Տ. Միքայէլ քահանայ
	19. Ս. Լուսաւորիչ		
	20. Ս. Կիրակոս		
	21. Ս. Նիկողայոս		
	22. Ս. Չարչարանաց	»	Տ. Ղեւոնդ քահանայ
	23. Ս. Պողոս Պետրոս		
	24. Տիրանաչէն		
ԵՐՈՒՍՏՂԷՄ	25. Բէթլէհէմու		
	26. Մակարու (Կիպրոս)		
	27. Յոպպի		
	28. Ռէմէլու		
	29. Ս. Հրէշտակապետ		
	30. Ս. Յակոբեանց		
	31. Ս. Փրկիչ		
ԵՒԿՈԿԻԱ	32. Ս. Յովակիմ Աննա	Վանահայր	Կարապետ վարդապետ
	33. Ս. Յովհանն Ոսկեբերան	»	Յակոբոս վարդապետ
	34. Ս. Նշան	»	Մանուէլ վարդապետ
ԹԷՐՃԱՆ	35. Ս. Գաւթի	»	Եփրեմ վարդապետ
	36. Ս. Թորոս	»	Ստեփան վարդապետ
ԹՄՄՁԱՐԱ	37. Ս. Գէորգ	»	Կարապետ վարդապետ
ԽԱՐԲԵՐԳ	38. Ապալման (Ս. Աստուածածին)	»	Գէորգ վարդապետ
	39. Գաւթի Ս. Գէորգ	»	Յարութիւն վարդապետ
	40. Գաղղմու	»	Պետրոս վարդապետ
	41. Մորսորու	»	Տ. Եսայի քահանայ
ԿԱՐԻՆ	42. Մանկերտու Ս. Կարապետ (Խնու)	»	
	43. Սեփիոյ (Կէմախ)	»	
	44. Ս. Աստուածածին Կարմիր ձեռք (Բասէն)	»	Յովհաննէս վարդապետ
	45. Ս. Լուսաւորիչ	»	
	46. Ս. Խաչ	»	Ներսէս վարդապետ
	47. Ս. Յովհաննէս (Իսպէր)		
	48. Ս. Նշան (Կէմախ)		
	49. Ս. Աստուածածին (Հատանբալէ)	»	Տիմոթէոս վարդապետ
	50. Ս. Փրկիչ (Կէմախ)		
ԿԱՐՍ	51. Խօշոյ վանք		

ԿԵՍԱՐԻԱ	52. Ս. Աստուածածին		
	53. Ս. Գանիէլ		Վանահայր Եղիա վարդապետ
	54. Ս. Կարապետ		
ԿԻԼԻԿԻԱ	55. Ս. Սարգիս	(Ուրֆա)	» Եփրեմ վարդապետ
	56. Ս. Գէորգ	(Մանճրլըխ)	
	57. Ս. Թորոս	(Տիվրիկ)	
	58. Ս. Լուսաւորիչ	(Յրնուզ)	» Նիկողոս եպիսկոպոս
	59. Ս. Յակոբ	(Տէրէնտէ)	
	60. Ս. Յակոբ	(Հաճն)	
	61. Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ	(Չէյթուն)	» Գրիգոր վարդապետ
	62. Ս. Փրկիչ Եւ Ս. Աստուածածին		
	63. Սոյ վանք (Կաթուղիկոսարան)		
ՄԱՐՁՈՒԱՆ ՄՈՒՇ	64. Չարխափան Ս. Աստուածածին		» Պողոս վարդապ. Խօշոյմեան
	65. Աղբարիկ		» Պետրոս վարդապետ
	66. Իննակնեայ Ս. Կարապետ		» Մամբրէ եպիսկոպոս
	67. Կոփայ Ս. Գանիէլ (Պուլանըխ)		» Ղազար վարդապետ
	68. Մատնայ		» Կարապետ վարդապ. Սէթեան
	69. Ս. Թարգմանչաց		» Յովհաննէս վարդապետ
	70. Ս. Յովհաննէս Աւետարանիչ		» Առաքել վարդապետ
Շ. ՂԱՐԱՀԻՍԱՐ	71. Երկոտասան Առաքեալք		
	72. Կարմրաւոր Ս. Խաչ		» Յովհաննէս վարդապետ
ՉԱՐՍԱՆՃԱՔ	73. Հալեւորի վանք		
ՉԵՔՈՒՇ	74. Սիրահայեաց Ս. Աստուածածին		» Յովհաննէս վարդապետ
ՊԱՅԱԶԻՏ	75. Երեք խորան Ս. Յովհաննէս		
ՍԵՐԱՍՏԻԱ	76. Անապատ վանք		
	77. Ս. Հրէշտակապետ		» Յակոբ վարդապետ
	78. Ս. Նշան		» Խաչատուր վարդապետ
ՍՂԵՐԿ	79. Ս. Կոնոնոս		
ՎԱՆ	80. Ալրու Ս. Աստուածածին		» Յակոբ եպիսկոպոս
	81. Աղթամարայ վանք (Կաթուղիկոսարան)		
	82. Անգղայ վանք (Հայոց ձոր)		
	83. Ակնդաշտայ (Մոկո)		
	84. Ապարանից Ս. Խաչ (Մամոտանք)		
	85. Արծուաբերու Ս. Աստուածածին (Արճէշ)		» Տ. Սողոմոն քահանայ
	86. Արջոնից (Արճէշ)		
	87. Արազանց վանք (Աւերեալ)		» Տ. Յովհաննէս քահանայ
	88. Ամնախիլիչի » (Մոկո)		» Տ. Յովհաննէս վարդապետ
	89. Բարեձորոյ (Հիզան)		
	90. Գամաղիէլ (Հիզան)		
	91. Գնաբերու (Արճէշ)		
	92. Գոմոյ Ս. Գէորգ		
	93. Եղեձորու Ս. Աստուածածին (Կառկառ)		
	94. Երեմերու Ս. Աստուածած. (Հայոց ձոր)		
	95. Երեմայ Ս. Սահակ		
	96. Էջմիածին վանք		» Թաղէոս վարդապետ
	97. Ընծայից Ս. Աստուածածին (Հայոց ձոր)		» Յակոբ եպիսկ. Թօփուղեան
	98. Լիմ անապատ		
	99. Լուսապտուղ Ս. Սահակ (Կառկառ)		
	100. Խնձորու Ս. Գէորգ (Աւերեալ)		
	101. Խլու վանք		
	102. Կարմրիկայ Ս. Գէորգ (Մոխրաբերդ)		
	103. Կարմրաւոր Ս. Աստուածածին		Փ. » Աթանոս վարդապետ
	104. Կոնկու վանք		» Գրիգոր վարդապետ
	105. Կոուց անապատ		» Մամբրէոս վարդապետ
	106. Հոգւոց վանք		» Յակոբ վարդապետ
	107. Մեծոփայ »		» Տ. Վարդան քահանայ
	108. Մատղայ » (Խլաթ)		
	109. Մրորայ Ս. Թովմայ առաքեալ (Կարճկան)		

ՎԱՆ	110. Յուսկան որդի	
	111. Նարեկայ վանք	Վանահայր Յովսէփ վարդապետ
	112. Շիրինից »	(Սպարկերտ)
	113. Չոռոյ Ս. Ստեփաննոս	(Շատախ)
	114. Շիտան Ս. Աստուածածին	(Մոկս)
	115. Պատրկայ Ս. Նշան	
	116. Սմբատաշէն Ս. Աստուածածին (Կեցան)	
	117. Սորիայ Ս. Կարապետ	
	118. Սպիտակ վանք	
	119. Ս. Աբրահամ	(Հայոց ձոր)
	120. Ս. Աստուածածին (Կեցան)	
	121. Ս. Աստուածածին (Հիզան)	
	122. Ս. Աստուածածին (Մոկս)	
	123. Ս. Աստուածածին (Շատախ)	
	124. Ս. Աստուածածին (Սպարկերտ)	
	125. Ս. Բարթոլոմէոս առաքեալ	» Եղիազար վարդապետ
	126. Ս. Գրիգոր	
	127. Ս. Թովմայ (Ռշտունիս)	
	128. Ս. Խաչ (Հիզան)	» Սահակ վարդապետ
	129. Ս. Խաչ (Մա՛ռտախք)	
	130. Ս. Խաչ (Տոսի)	» Տ. Խաչատուր քահանայ
	131. Ս. Կիրակոս (Սպարկերտ)	
	132. Ս. Մինաս (Մոկս)	
	133. Ս. Յակոբ (Ռշտունիս)	
	134. Աքանչեղադոր՝ Ս. Նշան	» Գրիգոր վարդապետ
	135. Արուխայ վանք	» Տ. Դաւիթ քահանայ
	136. Աքանչեղադոր՝ Ս. Յարութիւն	» Տ. Գրիգոր քահանայ
	137. Սարի Ս. Գէորգ (Մոկս)	» Ղազար վարդապետ
	138. Սպրկանից Ս. Կարապետ (Մոկս)	» Տ. Վարդան քահանայ
	139. Վարդայ Ս. Նշան	» Մկրտիչ եպիսկ. Խրիմեան
	140. Փոթիկայ վանք (Ռշտունիս)	
	141. Քալէֆու » (Մոկս)	
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ	142. Այնի Խարէխի վանք	
	143. Բարձրահայեաց Ս. Աստուածած. (Արղն)	» Յովհաննէս վարդապետ
	144. Մակարայեցւոց վանք	
ՏՐԱՊԵՉՈՆ	145. Ամենափրկիչ » (Աղճաղատու նահանգ)	
	146. Գեառադարձի վանք (Կէմալլը)	
	147. Ս. Փրկիչ (Կիւմրի շխանէ)	
ՔԷՄԱԽ	148. Աւազ վանք	
	149. Անարծաթայ (Աւերակ)	
	150. Ինն Սրբոց վանք	
	151. Սեպուհ կամ Լոսաւորչայ վանք	
	152. Սերովբէից վանք	
	153. Ս. Աստուածածին (Աւերակ)	
	154. Ս. Նշան	
ՔՂԻ	155. Ս. Աստուածածին	
	156. Ս. Կարապետ	» Տ. Խաթ քահանայ
	157. Ս. Կիրակոս	
ԿԱՐՍ	158. Թաթրց վանք (Աւերակ)	
	159. Ս. Գէորգ Նախշեւանայ (Աւերակ)	
ԹԷՐՃԱՆ	160. Շողունայ վանք	

ԾԱՆՈԹ. — Ասոնցմէ զորս են շատ մը աւերակ վանքեր ու կիւրկիւր կաթուղիկոսական թեմին տակ եղած ազգային մէկ քանի վանքերն, որոց վրայ Վանօրէից խորհուրդն որ եւ է տեղեկութիւն մը չէ ստացած :

Թ.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՎԱՆՕՐԷՅ

Վանօրէից խորհրդոյ պահանջման համաձայն հետեւեալ վանքերուն վիճակադրութիւնները եկած են :

1.

ԱՐԾՈՒԱԲԵՐՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ.

Վանայ քաջքերունեաց դաւառին մէջ ունի 2 փահանայ. 10 սարկաւազ եւ մշակք. 8 արտ. 7 անասունք :

Վարժարան 1, աշակերտ 12. Կ'ուսանին քերականութիւն, շարագրութիւն եւ ընթերցանութիւն :

Թեմական գիւղերն են, Ականց՝ տուն 20. Փրլուրմակ՝ տուն 25. Յօրօրան՝ տուն 15. Խարկին՝ տուն 8. Կարած-քար՝ տուն 5. որք ունին 5 եկեղեցի եւ 2 վարժարան :

Ծախք տարեկան վանուց 9000 զրշ :

2.

ԶԵՅԹՈՒՆԻ Ս. ՓՐԿԻՉ ԵՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ.

Հալէպու կուտակալութեան մէջ. ունի 5 Միարան վարդապետ. 1 լուսարար. 5 մշակ. 5 հողագործ. 1000 արտավար հող՝ բոլորն ալ ջրով. 2 մեծ արօտ. 2 այգի. 1 պարտէզ մրգեղինաց համար. 60 անասունք :

Վարժարան 1, աշակերտ 50. Կ'ուսանին ընթերցանութիւն, գրավարժութիւն, եկեղեցական երգեցողութիւն :

Թեմական գիւղերն են, Զէյթուն, Ալապաչ, Միսալ, Ապլասթայ, Եփեսոս, Ելէնճիլէր. — Բնակիչք 12000 այր եւ կին. որք ունին 5 եկեղեցի. 1 ուսումնարան՝ Ռուբինեան ընկերութեան հսկողութեան տակ. 7 նախակրթական վարժարան :

Մուսք տարեկան երկու վանօրէից 20292 զրշ. եւ ծախք 21125 զրշ :

3.

ԻՒՉ ՔԷԼԻՍԷԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՈՒ ՎԱՆՔ.

Պայաղիտու Բագրեւանդ դաւառին մէջ. ունի

5 վարդապետ. 14 սարկաւազ եւ դասատուք. 14 մշակք. 6 ներքին գործակալք :

12 տնտեսք եւ սպասուորք. 2 պատասխարեալ կոյրք. 55 սոմար հող՝ մեծ մասը անջրդի. 140 անասունք. 2 մարգագետին :

Վարժարան 1, աշակերտ 25՝ որոց տասն երթեւեկ են. Կ'ուսանին ընթերցանութիւն, Ս. Գրոց եւ ազգային պատմութիւն, թուարանութիւն, քերականութիւն եւ եկեղեցական երգեցողութիւն :

Թեմական գիւղերն 52 են. որք ունին 28 եկեղեցի եւ 20 վարժարան. տուն 864 :

Մուսք տարեկան վանուց 10500 զրշ. եւ ծախք 15900 զրշ :

Պայաղիտի մէջ ամայի եւ անբնակ վանք մ'ալ կայ Արեւորդիք կամ Եղիտի ըսուած կրօնքն ունեցող Մարագիկներու մէկ գիւղին մէջ :

4.

ԱՊՏԸԼՄՍԵՆԻ ՎԱՆՔ.

Խարբերդու գաւառին մէջ. ունի 1 վարդապետ. 4 մշակ. 2 տնտես. 11 կտոր հող՝ 6 ը ջրարբի. 2 այգի. 5 պարտէզ. 1 անտառ թթենուց. 16 անասունք :

Թեմական գիւղերն 13 են՝ որք ոչ եկեղեցի եւ ոչ վարժարան ունին :

Ծախք տարեկան վանուց 4800 զրշ :

5.

ԴԱԴԵՄՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԱՆՔ.

Խարբերդու գաւառին մէջ. ունի 1 վարդապետ. 4 մշակ. 2 տնտես. 1 հովիւ. 480 քիլէի հող՝ կէտուակէս ջրարբի է եւ կը ցանուի. 2 այգի. 6 պարտէզ. 22 անասունք :

Թեմական գիւղերն 9 են. որոց ամենուն մէջ եկեղեցի կայ, եւ վարժարան 7 ին մէջ միայն :

Ծախք տարեկան վանուց 3750 զրշ :

6.

ՍԻԲՍԻԲԻՒ Ս. ԳԷՈՐԳՍՅ ՎԱՆՔ.

Խարբերդու գաւառին մէջ. ունի 1 վարդապետ. 4 մշակ. 2 տնտես. 3 սպասուոր. 480 քիլէի հող՝ միայն 50 քիլէի կը ցանուի. 1 այգի. 1 պարտէզ :

Թեմական գիւղերն 9 են. որոց ամենուն մէջ եկեղեցի կայ, եւ վարժարան 7 ին մէջ միայն :

Ծախք տարեկան վանուց 3780 զրշ :

7.

ԿԻՒՄԻՏԻՆԻԱՆՍԻ Ս. ՓՐԿԻՉ ՎԱՆՔ

Տրապիզոնի գաւառին մէջ. ունի 1 աթոռակալ. 15 մշակ. 2 սպասաւոր. 64 արտ՝ բոլորն ալ անջրդէի. 1 արօտ. 1 անտառ. 1 պարտէզ. 1 ջաղաց. 129 անասունք: Թեմական գիւղերն են, Քոստանայ՝ տուն 60. Պալախոն՝ տուն 50. Նիւ՝ տուն 17. Բրնջրկայ՝ տուն 10. Խնձավերակ՝ տուն 8. Քէստէսի՝ տուն 2. Չախմանց՝ տուն 20. որք ունին 8 եկեղեցի եւ 7 վարժարան, եւ տարին 64 կոտ ցորեան (պտղի անուամբ) կը հատուցանեն վանուց:

Մուտք տարեկան վանուց 12550 զրշ. եւ ծախք 15490:

Մանօթ. — Վանուց արտօրայքն ապառաժուտ տեղուանք ըլլալով՝ 225 կոտ սերմ միայն կը պարունակէն: (1 կոտը 7 1/2 հօխայ հաշուելով):

8.

ՄՇՈՑ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ՂԱՉԱՐՈՒ ՎԱՆՔ

Տօրոսի արեւելեան կողմը Տարօն գաւառին մէջ. ունի

4 վարդապետ. 6 սպասաւոր. 5 մայրապետ. 7 մշակ. 295 տէօնիւմ արտ՝ բոլորն ալ ջրարբի եւ 60 քիլէ սերման տարածութիւն կը բռնեն. 2 անտառ. 4 այգի. 1 անտառ թըթենույ. 2 ջրաղացք. 1 ձիթահան. 1 անտեսատուն. 3 մարագ. 1 գոմանոց բանջարեղանաց. 166 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 12. կ'ուսանին Քրիստոնէական վարդապետութիւն, Ս. Գրոց եւ ազգ. պատմութիւն, քերականութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, շարադրութիւն եւ եկեղեցական երգեցողութիւն:

Թեմական գիւղերն 22 են. բնակիչ 715 նահապետական գերդաստան. որք ունին 22 եկեղեցի. 5 դպրոց. 58 քահանայ. — Մօտաւնէն թեմ ունի 5 գիւղ՝ տուն 36, եկեղեցի 2. — Տիգրանակերտի միջակէն թեմ ունի 7 գիւղ՝ տուն 74, եկեղեցի 5. — Խիանք գաւառէն 5 գիւղ՝ տուն 102, եկեղեցի 5:

Մուտք տարեկան վանուց 9459 զրշ. եւ ծախք 8448 զրշ:

Մանօթ. — Արտօրայք բոլորն ալ թափու կած են 1872 զեկտ. 21 ին:

9.

ՎԱՆՍՑ ՄԵՆՈՓԱՑ ՎԱՆՔ

Քաջբերունեաց նահանգին մէջ. ունի 7 միաբան. 12 մշակ. 2 մարգագետին. 1 այգի. 1 ջաղաց. 78 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 8. կ'ուսանին հասարակ ընթերցանութիւն, հայկաբանութիւն եւ թուադիտութիւն:

Թեմական գիւղերն են, Յարութիւն՝ տուն 14. Ասպիսնակ՝ տուն 18. Մաճառս՝ տուն 10. Իրիշատ՝ տուն 19. Պերթակ՝ տուն 28. Աղըսրաւ՝ տուն 61. Մատղաւանք՝ տուն 9. Աղբակ տուն 5. Գրագոմ՝ տուն 15. Գողեր՝ տուն 8. որք ունին 7 եկեղեցի եւ 7 վարժարան:

Մուտք տարեկան վանուց 8200 զրշ. եւ ծախքն 7645 զրշ:

Մանօթ. — Հողերու վրայ տեղեկութիւն տալը ետքի կը թողու. Բախչի ձեռնարկած ըստուան պատճառաւ:

10.

ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆՔ

Տրապիզոնի Բարձր Հայոց գաւառին մէջ. ունի

1 սպասաւոր մը միայն. 1 կոտը հող՝ կէս ժամ լայնութեամբ եւ կէս ժամ երկայնութեամբ. 1 անտառ այրած:

Ոչ թեմ ունի եւ ոչ գիւղ: Մուտք տարեկան վանուց 20000 զրշ. ծախք վանուց 5000 զրշ:

Մանօթ. — Մնացեալ 15000 զրշ. ը Տրապիզոնի Լուսաւորչեան վարժարանին կը վճարուի ամեն տարի:

11.

ՍՂԵՐԿԻ Ս. ԿՈՆՈՆՈՍԻ ՎԱՆՔ

Ղարզան գաւառին մէջ. ունի 6 միաբան վարդապետք. 5 դպիր. 14 մշակ. 9 արտ. 1 պարտէզ. 1 անտառ թթենույ. 10 այգի. 1 ջաղաց. 44 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 22. կ'ուսանին ընթերցանութիւն, գիր եւ եկեղեցական երգեցողութիւն:

Թեմական գիւղերն 28 են՝ տուն 176, եւ 10 եկեղեցիք:

Մուտք տարեկան վանուց 80 հօխայ չամիչ՝ 68 զրշ:

12.

ԿԱՐՄԻՒՈՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Վանայ արեւելեան կողմը Վանասոսի գաւառին մէջ. ունի

2 վարդապետ. 2 դպիր. 5 սպասաւոր. 28 մշակ. 15 1/2 քիլէի հող ջրարբի. 1 ջրաղաց. 1 խաղողի այգի. 42 անասունք:

Թեմական գիւղերն են՝ Խառականից. Քապապիկ. որք եկեղեցի ունին, իսկ դպրոց ոչ: Մուտք տարեկան վանուց 1100 զրշ. եւ ծախքն 5000 զրշ:

13.

ԲԱՐՉՐԱՆՍԵՄԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Հասան գալէի՝ Արղնու նահանգին մէջ. ունի 4 վարդապետ. 6 դպիր. 2 մշակ. 28 արտ՝ 20 կոտը միայն անջրդի. 2 պարտէզ. 1 այգի. 5 տուն. 4 խանութ. 44 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 11. կ'ուսանին ընթերցանութիւն եւ քերականութիւն:

Թեմական գիւղերն են. Արղնի՝ տուն 215. Մատան՝ տուն 125. Չերմուկ՝ տուն 150. Ակըլ՝ տուն 175. որք ունին 5 եկեղեցի եւ 5 վարժարան:

Մուտք տարեկան վանուց 17190 զրշ. եւ ծախքն է 17655 զրշ:

14.

Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

Վանայ հարաւային կողմը Տօսի գաւառին մէջ. ունի

1 քահանայ. 2 անտես. 5 մշակ. 5 ըսպասաւոր. հող 60 չափ ջրարբի. 1 այգի. 10 արտ. 90 անասունք:

Թեմական գիւղն է, Կոռուպաշ՝ տուն 75. որ ունի 1 եկեղեցի:

Մուտք տարեկան վանուց 2750 զրշ. եւ ծախքն է 3552 զրշ:

15.

ԲԱՍԵՆՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Վերին Բասենու գաւառին մէջ. ունի 7 մշակ. 60 սօմար հող՝ 50 ի չափ ջրարբի. մասնաւոր մէկ քանի արօսներ. 55 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 2:

Թեմական գիւղերն 45 են. որոց 20 ը եկեղեցի ու վարժարան ունին:

Մուտք տարեկան վանուց 12600 զրշ. եւ ծախքն է 14500 զրշ:

16.

ՆԱՐԵԿԱՑ Ս. ԳՐԻԳՈՐԻ ՎԱՆՔ

Վանայ Ռշտունեաց գաւառին մէջ. ունի 10 միաբան. 51 մշակք եւ սպասաւորք.

51 քիլէի հող՝ ջրարբին. 2 անտառ. 2 այգի. 2 ջաղացք. 1 ձիթահան. եւ մէկ քանի խանութք. 219 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 15. կ'ուսանին ընթերցանութիւն, քերականութիւն, շարադրութիւն եւ ճարտասանութիւն:

Թեմական գիւղերն 4 են. որոց բնակչաց թիւն է 120 տուն, եւ ունին 5 եկեղեցի եւ 1 վարժարան:

Մուտք տարեկան վանուց 5000 զրշ. եւ ծախքն 5000 զրշ. ի մօտ է:

17.

ԱՂԲԱՐԻԿ ՎԱՆՔ

Սասունի Տօրոս լեռան վրայ. ունի 10 միաբան. 11 մշակ. 2 հովիւ. 10 արնտես եւ սպասաւոր. 6 քիլէի հող. 1 ժամ ջուր. 1 անտառ. 1 արօտ. 11 արտ. 1 ջաղաց. 179 անասունք:

Վարժարան 1, աշակերտ 18. կ'ուսանին ընթերցանութիւն եւ գիր:

Թեմական գիւղերն են, Մանազկերտ՝ տուն 85. Աղերտ՝ տուն 94. Խոյթ՝ տուն 400. որք ունին 18 եկեղեցի:

Մուտք տարեկան վանուց 11505 զրշ. եւ ծախքն է 15850 զրշ:

18.

Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔ

Քղիի Խօսնակ նահանգին մէջ. ունի 5 մշակ. 1 անտես. 50 քիլէի հող՝ բոլորն ալ ջրարբի. արօտ եւ անտառ ըստ բաւականին. 25 արտ. 5 ձախին. 1 1/2 ջաղացք. 75 անասուն:

Թեմական գիւղերն 16 են. որք ունին 450 տուն, 16 եկեղեցի եւ 8 վարժարան:

Մուտք տարեկան վանուց 5000 զրշ. ի մօտ եւ ծախքն է 5000 զրշ. ի մօտ:

19.

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ ՎԱՆՔ

Նուղիկոյ կոմանակ նահանգի՝ Պիղէրի գիւղին մէջ. ունի

2 վարդապետ . 2 դպիր . 5 սպասաւոր . 7 մշակ . 45 քիլէի հող եւ արտեր . 25 քիլէի արօտ . 69 անասունք 7 խանութ եւ մաղաղայ :

Ծանօթ.— Վարժարան չունի , եւ քանի մը տղայք վանքն երթեակելով կ'ուսանին ընթերցանութիւն միայն :

Յատուկ գիւղեր թեմ չ'ունի , այլ վանքը Եւզոնիոյ վիճակին թեմն է :

20.

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Հալէպու գաւառին Յրնուզ գիւղին մէջ . ունի

6 միաբան . 5 մշակ . 17 կտոր հող՝ 250 արտավար տարածութեամբ . 5 այգի . 3 արօտ 285 անասունք . 1 շաղաց :

Վարժարան 1 , աշակերտ 12 . կ'ուսանին ընթերցանութիւն եւ եկեղեցական երգեցողութիւն :

Թեմական գիւղերն 9 են . որք ունին 7000 բնակիչ , 9 եկեղեցի եւ 1 վարժարան :

Մուտք տարեկան վանուց 16554 զրշ . եւ ծախքն է 20500 զրշ :

Ծանօթ.— Տարեկան սնտուկին բացը գիւղերը չըջագայած զանձանակի արդիւնքով կը գոցեն :

21.

Ս. ՔՐԻՍՏՈՒՓՈՐԻ ՎԱՆՔ

Բաբերդու Խօփուզ գիւղի սահմանին մէջ . ունի

Հոգաբարձութիւն մը , որ վանքը կը կառավարէ , եւ մէկ քանի մշակներ . 80 արտ միայն 15ը ջրաբբի . 261 անասունք . 56 մեղրի բեթակ յատուկ պարտէզով մը : Տուն մը ի Բաբերդ 200 զրշ տարեկան վարձքով :

Ծանօթ.— Վանքն կապակցեալ թեմ չունի , բայց մօտակայ գիւղերէն եկող ուխտաւորք կը նպաստեն եւ խնամք կը տանին միշտ :

22.

Ս. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՔ

Երզնկայու Չախաման գիւղին մէջ :

Ծանօթ.— Այս վանքը ոչ թեմ ունի , ոչ կառուած եւ ոչ այլ ինչ , մարդ անգամ չկայ կ'ընէ վիճակազիրը . սակայն պիտի ստուգուի թէ տրուած այս տեղեկութիւնները ճշմարիտ են . մի գուցէ յափշտակուած ըլլան վանքին գոյքերը :

Աստ կը դնենք նաև այն վանքից կարուածոց ցուցակը , որն որ նախորդ վարչութեան 1870 նոյեմբեր 26 թուականու յրջարեքականին վրայ եկած են ՚ի Պատրիարքարան :

23.

ՉՈՐԻՍՏՈՒՓՈՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ ՅԱՐՄԱՇ(1)

Ունի .

1. Ագարակ մը , յորում կայ թիֆեհաց պարտէզ մը իբր 40 արտավար . եւ կաղնի ծառոց անտառ մը գերանի համար պահուած , ուրկէ արդիւնք առնելու համար առնուաղն 50 տարւոյ կարօտ է : Ագարակը կը պարունակէ իբր 1500 արտավար հերկելի արտ , եւ իբր 500 արտավար հերկելի արտ ալ ագարակէն դուրս վանքին մօտերը կը գտնուի : Եւս 400 արտավարի չափ անտառ կայ , ուրկէ տարուէ տարի արտ բանալ կը տրուի մշակելի գետնոց անբաւականութեանը պատճառաւ :

2. Թիֆեհաց պարտէզ մը 3000 ծառոց մօտ՝ վանքին շուրջը :

3. Այգի մը 5 տարեկան՝ 15000 որթով :

4. Աղօրիք մը՝ վանքին պէտքը հոգալու համար :

5. Պարտէզ բանջարոյ իբր 8 արտավար :

6. Ոչխարաց հօտ մը , որոց բուրդը կաթն եւ միսը ներքին սպառման անգամ չեն բաւեր , եւ հովուաց տարեկան վարձքը ուրիշ եկամուտներով կը հայթայթուի :

Ասոնք են սոյն վանքին եկամտից մէկ մասը . միւս մասն են բարեպաշտ ուխտաւորաց նուէրները :

(1870 Դեկտ. 20 Լուսակոմիտեի Պատրիարքարան զրէնած)

24.

Ս. ԼՈՒՍՈՒՈՐԻՉ ՎԱՆՔ Ի ԿԱՐԻՆ

Ունի .

1. Ագարակ մը՝ 20 արտով , 25 սօմարնոց , (2) 2500 զշ տարեկանով վարձու տրուած :

1 — Համարատուութեան տեղեկագրին 22դ. երեսին Ա. սիւնակին ներքեւ սխալմամբ ըսուած է թէ « սոյն վանքին շարժական եւ անշարժ ստացուածոց ցուցակն ալ յաջորդ Համարատուութեան մէջ կը ներկայացուի » . փոխանակ ըսելու թէ « սոյն Համարատուութեան տեղեկագրին վերջը կը ներկայացուի » :

2. — Մէկ սօմարը 16 կօտ է , 1 1/2 կօտը մէկ արտաւար տեղ հաշուելով . 1 սօմարը 10 արտավար տեղ պիտի հաշուի :

2. Այլեւայլ տեղերու մէջ 57 արտ՝ 28 սօմարնոց , որոնցմէ 52 արտ խոպան են եւ անմշակ :

5. 10 Արօտ՝ 186 բարդնոց (1 բարդ 50 խուրձ է) :

4. 1 Պէրպէրխանէ եւ 1 Պէղաղի խանութ ՚ի Կարին , երկուքը 800 զշ տարեկանով :

25.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ Ի ԿԱՐԻՆ

Ունի .

1. 58 արտ՝ 52 սօմարնոց . այս արտերէն 45ը խոպան են :

2. 8 արօտ՝ 150 բարդնոց :

3. Ջրաղաց մը :

4. Կայնոց մը :

26.

Ս. ԽԱՉԱՍ ՎԱՆՔ Ի ԿԱՐԻՆ

Ունի .

1. 20 արտ՝ 12 սօմարնոց :

2. 6 արօտ՝ 55 բարդնոց :

(1870 Դեկտ. 30)

Ծանօթ.— Ժողովրդեան պողիի արդիւնքով կը մատակարարուի վանքը : Ծախքն է 5-4000 զրուշ :

27.

ԼԻՄ ԱՆԱՊԱՏ Ի ՎԱՆ

Լիմ Անապատի վանահայրութեան ներքեւ կը գտնուին Դրսի տուն անունով վանքը . Ս. Եջմիածնի վանքն՝ ի սկզբան հիմնեալ ի Թաղէսս Սրբազան Առաքելոյն . Սբ. Սահակ վանքն . Արագանց վանքն՝ աւերեալ . Իլու վանքն՝ աւերեալ . Ս. Աստուածածնի վանքն՝ հիմնեալ ի Թաղէսս Ս. Առաքելոյն եւ վերանորոգեալ ի Սբ. Լուսաւորչէն մերմէ եւ ՚ի Տրդատ թագաւորէն ունի .

1. 27 արտեր , 45 քիլէ ցորեն ցանելու տեղ :
2. 5 Այգի :
3. 7 Արօտ :
4. 5 Ջրաղացք :
5. 1 Զիթահան , տարեկան 70 հօխայ ձէթ կուտայ :
6. 1 Անտառ :
7. 1 Թիֆեհաց պարտէզ՝ 1000 ծառով :
8. 1 Աղահանք՝ գրաւեալ յայլաղբեաց .
9. Վանայ մէջ 28 կրպակներ , 5-5500 զրշ

տարեկան վարձք ունին . եւս տուն մի փոքր՝ ի վան , եւ տուն մի՝ յԱւանց գիւղն , (օթեւանք անապատականաց) :

10. ի Պօլիս բենեակ մի՝ ի Վէղիր խան , եւ սենեակ մի՝ ի Հասան փաշա խանը , Լիմ եւ Կտուց անապատաց սեփական :

11. ի Պօլիս յԱյնաճըլար չարչին՝ Չուխաճիլի մաղաղա մի , Պալեան Կարապետ ամիրայէն նուիրեալ Լիմ եւ Կտուց անապատաց . 3000 զրշ . եւ աւելի տարեկան վարձք ունի :

12. յԱդրիանուպօլիս 2 խանութներ Լիմ եւ Կտուց անապատաց սեփական , 1000 զրշի մօտ տարեկան վարձքով :

15. ի Թէքիրտաղ Ստալար անուն տասնեւմէկ տունք , Լիմ եւ Կտուց անապատաց սեփական , տարեկան 1000 զրշի չափ վարձքով :

14. ի Տփլիս 5 կրպակներ , որոց արդեանց երկուքը Լիմ եւ Կտուց անապատաց եւ մէկը Վարագայ եւ Նարեկայ վանօրէից կուակեալ . 800 մանէթ տարեկան վարձք ունին :

Այս վանուց տարեկան ծախքն է 50-55000 զրշ . եւ տարեկան եկամուտն է 20-25000 զրշ :

Լիմ ունի 1 Եպիսկոպոս վանահայր՝ Յակոբ Սրբազան եւ 25 վարդապետք . 50 ի մօտ սարկաւազք , զպիրք եւ մահտեսիք : Եւս 13 զըպրօցական տղայք ի Կրսի տան . կը պարապին Հայկաբանութեան . եւ այլ մշակք եւ անտեսք , ընդ ամենը 100 ի մօտ անձինք են :

(1871 Մարտ 25)

28.

ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏ Ի ՎԱՆ

Կտուց անապատի վանահայրութեան ներքեւ կը գտնուին Կրսի տուն անունով վանքը եւ Ալիւր գիւղի քով եղած մենաստանն Ս. Աստուածածնայ անուամբ :

Ունի .

1. 140 քիլեթան տեղ (ամեն մէկ քիլեթան մէկ չափ սերմամուտ տեղէ) , որոց 56 քիլեթանը կը ցանուի , եւ 84 քիլեթանը անասնոց արածելու տեղ է :

2. 6 կտոր արտեր , 17 չափ սերմամուտի տեղեր :

3. 2 արօտ 70 բարդ խոտ բերող :

4. 2 պարտէզ՝ որք թէ 95 բարդ խոտ կը բերեն եւ թէ շինութեան համար ծառեր ունին :

5. 1 Այգի :

- 6. 1 Ձիթահան :
- 7. 5 Ջրաղացք :
- 8. 'ի վան 50 խանութ . 5 տուն եւ 1 փուռ . 10000 ղշ տարեկան վարձքով :

Կտուց անապատի ուրիշ սեփականութիւնները Լիմ անապատի սեփականութեանց կարգին մէջ յիշուած են :

Այս անապատէն 200 քիւթան հողը գերաւեալ է յայլազգեաց :

Կտուց ունի 12 վարդապետք , 50 սարկաւազք՝ դպիրք եւ մահտեօիք , 50 վարձկան մշակք . եւս 10 դպրոցական տղայք Դրօի տան մէջ կը պարապին Հայկաբանութեան և եւ Տաճկաբանութեան :

Իսկ Ս. Աստուածածին մենաստանն ունի 40 արտ , 100 քիւթան տեղ , եւ 1 վարդապետ՝ ժամասացութեան համար . աստ բացուած է նաեւ վարժարան՝ Ալիւր զիւղի 60 ի չափ տղոց դաստիարակութեանը համար :

(1871 Մարտ 25)

29.

Ս. ԹՈՐՈՍ ՎԱՆՔ Ի ԹԵՐՃԱՆ

- Ունի .
- 1. 4 Արտեր , 20 Պօլտոյ քիլէ ցորենի տեղ :
  - 2. 5 ժամու չափ շրջապատած անտառախիտ մօրենի , քարուտ եւ անբեր հողեր :

Վանուց ուրիշ արտերն ու կալուածները յափշտակեալ են 'ի քրթաց :

Վանքին մէջ 4 քահանայ կը բնակին իրենց աներով . թէ վարուցանի եւ թէ ուխտաւորաց արդիւնքն իրենց չբաւեւուն , ժողովարարութեան ալ կելլան :

Վանուց մատուռն Լուսաւորչաչէն է եւ անուանի ուխտատեղի :

30.

Ս. ԳՍԻԹԱՅ ՎԱՆՔ Ի ԹԵՐՃԱՆ

Ժողովրդեան Պաղի արդիւնքը միայն իր արդիւնքն է :

31.

ՇՈՂՈՒՆԱՅ ՎԱՆՔ Ի ԹԵՐՃԱՆ

Աւերակ . թէեւ Ս. Կարապետ անուամբ եկեղեցին դեռ կանգուն է . ասոր արտերն եւ կալուածները յափշտակեալ են :

1871 Փետր 28

32.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ Ի ԳԱՂԱՏԻԱ Ունի .

- 1. 5000 արտավար հող , որոյ 2000ը ոչխար արածելու սահմանեալ է , 100ը բանջարեղինաց պարտէղի , 900ը մշակութեան . տարեկան հազիւ 5000 ղրշ . հասոյթ կը բերէ :
- 2. Ոչխարներ , որոց ոչ գոյ թիւ :

(1871 Ապրիլ 28)

33.

ԳՈՒՂԷԻ Ս. ԳԵՈՐԳՈՅ ՎԱՆՔ Ի ԽՍՐԲԵՐԴ Ունի .

- 1. Երեք քառորդ կամ մէկ ժամու ճանապարհով շրջապատ ունեցող հող , բայց 20 էն 1ը հազիւ կը մշակուի , եւ մեծ մասն աւազուտ եւ անպտուղ է . 50 կամ 60 արտ միայն կը ցանուին այլ եւ այլ ընդեղեններ եւ բամպակ :

- 2. 2 Այգի :
- 3. Փոքրիկ անտառ մը :
- 4. 50 ոչխար եւ 2 կով :

(1871 Յունվար 17)

34.

Ս. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱՆ ԿՍՄ ՅԱՍԳ ՎԱՆՔ Ի ՔԷՄԱԻ

- Ունի
- 40 լծվար մշակելի երկիր , չուրջը մինչեւ 4 ժամ անմշակ եւ խոպան է :

Քէմախու մէջ կը գտնուին

Ա. Սեպուհ կամ Լուսաւորչայ վանք , որ հինգ փոքրիկ գիւղերու պողիովը կ'ապրի :

Բ. Փրկչայ կամ ինը սրբոց գերեզման՝ որդուց եւ թոռանց Լուսաւորչայ վանք , Թորթան գիւղի մէջ տեղ , եւ սոյն գիւղի բնակչաց արօքը կ'ապրի : Կ'աւանդուի թէ՛ սոյն վանուց արտօքը սոյն գիւղի բնակիչք իրենց սեփականեր են :

Գ. Ս. Նշանայ վանք , ուր կը բնակին հինգ ընտանիք , եւ վանքին շրջակայ արտերն իրենց սեփականած են :

Դ. Սերովբէից վանք . որոյ չուրջը գրտնուած 40 լծվարէն աւելի արտերը թուկներու Հայ գիւղացիք իրենց սեփականած են :

Ե. Ս. Աստուածածնայ վանք՝ ի վաղուց փլատակ եղած . ասոր չուրջը թէեւ 15 լծվար տեղ կայ բայց Սաղըր օղլու հաճի Մէհմէտ պէկին սեփականութիւնն եղած են :

39.

ՍԻՐԱՀԱՅԵԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ Ի ԶԵՔՈՒՇ Ունի .

- 1. 50 էօլէկի տեղ :
- 2. 1 պարտէզ բանջարոյ :
- 3. Քանի մը այգիներ :
- 4. 2 Ջրաղացք՝ աւերակ :

(1871 Փետր 10)

40.

ՎԱՆՈՐԱՅԻ ԱՂՔԱՄԱՐԱՅ Ի ՎԱՆ

Վանօրայք Հայոց Զորոյ

- 1. Ս. Գեորգ վանք Խեթոյ

Ունի 5-6 քիլէի սերմամուտ արտօրայս . 4 գիւղ թեմ . պարտք 1500 ղրշ . տոկոսիւ :

- 2. Ս. Աստուածածին վանք Երեւոյնքոյ

Ունի 6 քիլէի սերմամուտ արտօրայս . 1 ձիթահան . 5 գիւղ թեմ :

- 3. Ս. Աստուածածին վանք Սբախոյ

Ունի 5 1/2 քիլէի սերմամուտ արտօրայս . 5 գիւղ թեմ . 1 ջրաղաց . պարտք 2000 ղրշ . տոկոսիւ :

- 4. Ս. Աստուածածին վանք Կաթոյ

Ունի 5 քիլէի սերմամուտ հող . 2 գիւղ թեմ . 1 այգի . պարտք 1200 ղրշ . տոկոսիւ :

- 5. Ս. Աստուածածին վանք Անիոյ

Ունի 6 քիլէի սերմամուտ հող . 1 ջրաղաց աւերակ . 5 գիւղ թեմ . պարտք 15000 ղրշ . տոկոսիւ :

Վանօրայք Ռատանայ

- 6. Սպիտակ վանք Ս. Աստուածածին

Ունի 4 քիլէի սերմամուտ հող . 1 այգի . 1 ջրաղաց՝ աւերակ . 4 գիւղ թեմ . պարտք 9000 ղրշ . տոկոսիւ :

- 7. Զարհան Ս. Նշան վանք Եղեղի

Ունի կէս քիլէի սերմամուտ հող . 1 այգի բարդենի ծառոց . 1 ջրաղաց . 4 գիւղ թեմ . պարտք 1000 ղրշ . տոկոսիւ :

Վանօրայք Ռատանայ

- 8. Նարեկայ վանք

(Ասոր վիճակագրութիւնը տես կրեա 37 եւ թուահամար 16 .)

- 2. Անարծաթայ վանք՝ ի վաղուց փլատակ եղած . ասոր չուրջը գտնուած մշակեալ արտերը Սաղըր օղլու ընտանեաց ձեռքն է :

(1871 Փետր 11)

35.

Ս. ԳՈՒՂԷԻ ՎԱՆՔ Ի ԿԵՍՍՐԻԱ

- Ունի .
- 1. 22 կտոր արտեր , 50 արտավար տեղ , 25 Պօլտոյ քիլէ սերմ կը ցանուի տարուէ տարի :

- 2. 45 կտոր պարտէզ , բանջարեղինաց յատուկ :

(1870 Պեկտ 25)

36.

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔ Ի ԿԵՍՍՐԻԱ

- Ունի .
- 1. 22 արտ , 520 քիլէնոց տեղ :
  - 2. 4 ծառատունկ այգի , 100 արտավար :
  - 3. 1 պարտէզ թթենեաց , 50 արտավար :
  - 4. 5 պարտէզ բանջարեղինաց , 50 արտավար :

- 5. 1 այգի խաղողոյ , 45 արտավար :
- 6. 1 ձերհէլիկ , 70 արտավար :
- 7. 26 արտավար տեղ՝ անմշակ :
- 8. 7 ջրաղացք :
- 9. 1 Ձիթահան :

37.

Ս. ՍԱՐԳՍԻ ՎԱՆՔ Ի ԿԵՍՍՐԻԱ

- Ունի .
- 1. 5 արտ՝ 20 քիլէնոց տեղ :
  - 2. 2 պարտէզ՝ մէկը ծառոցեւ միւսը բանջարեղինաց :
  - 3. 1 այգի :
  - 4. 1 եօնճալք՝ 50 արտավար :
  - 5. 1 ձերհէլիկ՝ 25 արտավար :

38.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ Ի ԿԵՍՍՐԻԱ

- Ունի .
- 1. 20 արտ՝ 270 արտավար տեղ :
  - 2. 1 պարտէզ բանջարոյ :
  - 3. 2 ձերհէլիկ՝ 20 արտավար տեղ :

(1871 Յունվար 21)



9. Ս. Ասորոսի վանքի վանքի Մարտիրոսի...  
Ունի 4 քիլէի սերմամուտ հող . 1 ձիթա-  
հան . պարտք 4000 զրշ . (արտօրայք բոլոր գը-  
րաւ են պարտուց) :

10. Սրբազան Կարապետի վանքի  
Ունի 5 քիլէի սերմամուտ հող . 1 ջրաղաց .  
4 գիւղ թեմ . պարտք 2000 զրշ :

11. Ս. Սահակ  
Ունի 2 քիլէի սերմամուտ հող . 1 ջրաղաց .  
1 այգի բարդենի եւ ընկուղի ծառոց . պարտք  
5000 զրշ :

12. Ս. Յակոբ վանքի Կարապետի  
Ունի 6 քիլէ սերմամուտ հող . 2 ձիթա-  
հան . 1 ջրաղաց . 5 գիւղ թեմ . պարտք 21000  
զրշ . (կալուածք բոլոր գրաւ են պարտուց .  
վանքն աւերակ եւ երկնաման Ս. Տաճարն եղ-  
եալ է աղբիւսք թռչոց) :

13. Սրբազան Կարապետի վանքի Ս. Յարութիան  
Ունի 4 քիլէի սերմամուտ հող . ըստ բա-  
ւականին անստա . պարտք 6000 զրշ :

14. Ս. Գեորգի վանքի Սրբազան  
Ունի 3 քիլէի սերմամուտ հող . պարտք  
5000 զրշ . (արտօրայք գրաւ են պարտուց) :

Վանքայր Մոկաց  
15. Վանքայր Ս. Գեորգի  
Հող կամ կալուածք բնաւին չունի . ի ձիւ-  
նապատ լերին դողով պատսպարան է բոլոր եր-  
թեւեկողաց . կամաւոր ժողովարարութեամբ  
կ'ապրի :

16. Ս. Արամի վանքի Յարութիանի  
Ունի 3 չափ սերմամուտ հող . քանի մը  
գիւղ թեմ . պարտք 2000 զրշ . (Ատուկայ իշ-  
խանի վանքն է) :

17. Ս. Կարապետ վանքի Սրբազանի  
Ունի կէս քիլէի սերմամուտ հող . քանի մը  
գիւղ թեմ . ազքատ եւ ողորմելի . պարտք  
2300 զրշ . (Քիւրթեր ըստ հին սովորութեան  
գաւառ իւրեանց բանուն եւ ճէրութիւն գիւղ .  
մինչեւ ցարդ Մոկաց պէյեր զվանորայս եւ ըզ  
գիւղս փոխանց վաճառեն իբրեւ անաղատելի  
գերի . համարեայ թէ Հայազգին Մոկաց մէջ  
հող չունի ) բոլոր քրթայ է . քրթայ հարկա-  
պահանջութիւն առաւել է քան տէրութեան :

18. Ս. Ասորոսի վանքի Մարտիրոսի  
Ունի 2 չափի հող , որ գրաւ է պարտուց .  
քանի գիւղ թեմ . պարտք 1500 զրշ :

19. Ս. Ասորոսի վանքի Կարապետի  
Ունի 1 1/2 չափի հող . 1 գիւղ թեմ . (փայ-  
տատով կը հերկեն . հաց Մոկաց է ի հաճարոյ .  
ցորենուց հաց հինգ նաւակատեաց միայն կարեն  
ուտել ) :

20. Կոնյայ վանքի  
Ունի 1 չափ սերմամուտ հող .  
(Այս Մոկաց քիւրթ վանքայտ հրատարակեն . որպէս  
չի Արթուրայ իշխանութեան ներքեւ հարուած քաղաք  
վանքեկէց անանկերն ինչոցն ) :

21. Ս. Ասորոսի վանքի Ս. Կարապետի  
Ունի 2 չափի հող . ամայի մնացած է եւ ոչ  
ոք իշխէ նստիլ :  
(Մոկաց իշխանն շինեալ են զայս վանքոյս ) :  
(Շարայ վանք շինել ) :

22. Մարտիրոս Ս. Ասորոսի վանքի  
Ունի 1 քիլէի սերմամուտ հող . (աւերակ է) :

Վանքայր մասրատեկից  
23. Ասորոսի վանքի Ս. Խաչ  
Ունի 3 քիլէի սերմամուտ արտեր . 1 ջրա-  
ղաց . մրգարեր ծառատունկս անթիւ . 15 գիւղ  
թեմ : (բոլոր կալուածք վանուց Օսման աղայի  
ձեռքն է) :

24. Կրեւի վանքի Ս. Խաչ  
Ունի 2 չափ սերմամուտ հող . 1 գիւղ թեմ :

25. Սրբազան վանքի Ս. Ասորոսի  
Ունի 3 չափ սերմամուտ հող . 1 այգի . 3  
գիւղ թեմ :

Վանքայր Հիզուր  
26. Ասորոսի վանքի Ս. Նշան  
Ունի 1 քիլէ սերմամուտ արտեր . 2 այգի .  
1 ջրաղաց . ծառատունկս եւ անստա . 13 գիւղ  
թեմ . պարտք 1300 զրշ :

27. Բարեճոր վանքի Ս. Ասորոսի  
Ունի 1 քիլէ սերմամուտ հող . 1 ջրաղաց .  
պարտք 2000 զրշ : (Մալքեացի Աշիրաթի ձեռք  
գերի անաղատելի . ամենայն ընչից մի մասն  
նոցա է) :

28. Սրբազան վանքի Ս. Ասորոսի  
Ունի 6 չափ սերմամուտ արտեր . պարտք  
2000 զրշ . տոկոսիւ : (Հիզուր Խարուբայ քրթ-  
թաց ձեռք անաղատելի գերի) :

29. Սրբազան վանքի Ս. Գարուդի  
Ունի կէս քիլէի սերմամուտ արտեր . 1 ան-  
տառ . քանի մը գիւղ թեմ . պարտք 2400 զրշ :  
Վանքայր Կառնատո

30. Խնչորոսի վանքի Ս. Գեորգի  
Ունի կէս քիլէ սերմամուտ արտեր . 2 գիւղ  
թեմ . պարտք 2500 զրշ : (Կալուածք գրաւ են  
պարտուց . անաղատելի գերի ի ձեռս Շիրվանու  
Շէրպէյ եւ Սահլա պէյից տղայոց) :

31. Չիբուրի վանքի Ս. Ասորոսի  
Ունի 1 քիլէի սերմամուտ արտեր . 1 ջրա-  
ղաց . 1 ձիթահան . քանի մը գիւղ թեմ . պարտք  
5000 զրշ . տոկոսիւ : (Ընդ իշխանութեամբ  
Տիգրանակերտի եւ Սղերդի) :

32. Կեցանու վանքի Սրբազան Ս. Ասորոսի  
Ունի 1 1/2 քիլէի սերմամուտ արտեր . ծա-  
ռատունկս խնձորենի ընկուղենի անթիւ . 4 գիւղ  
թեմ , որք ստրուկ են Կեցանու Խաչի եւ Մահ-  
մաւ պէյից ոչ նստել կարեն եւ ոչ փախիլ .  
պարտք 6000 զրշ : (Կալուածք գրաւ են պար-  
տուց . վանքն թեմերով ընդ իշխանութեամբ  
Բաղիշոյ է) :

41.  
Ս. ԹՈՐՈՍ ՎԱՆՔԻ ԽՈՐՀՐԴՈՑ  
Ունի  
1. 20 արտ 41 քիլէի սերմամուտ տեղ :

2. 2 պարտեղ :  
3. 250 ոչխար եւ այծ :  
4. 1 աղբիւր :  
5. 20 քիլէի չափ մարգագետին . պարտք  
25000 զրշ : (Ատնց մէկ մասը թէեւ վանահօր  
անձնական ստացուածքն է . բայց արդիւնքը  
վանքին պիտոյից կը գործածուի) :  
(3 Մայիս 1871)

42.

ՄԱԿԱՐԱՑԵՑԻՈՑ ՎԱՆՔ  
Ունի  
1. 5 արտ :  
2. 1 պարտեղ :  
3. Եր շուրջը մէկ ժամու չափ տեղ կաղ-  
նի ծառեր :  
4. 2 Ջաղացք :  
5. 1 Այգի 4 արտավար տեղ :  
6. Անտունք ոչխար եւն :  
(18 Փետր. 1871)

43.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԵՆԻ ՎԱՆՔ Ի ՄԱՐՉՈՒԹԵԱՆ  
Ունի  
1. 45 արտ , որ է 1445 Պոլսոյ քիլէնոց  
տեղ , կամ 957 Մարզուանու արտավար տեղ :  
2. 1 պարտեղ , 18 քիլէնոց , 12 արավր :  
3. 6 լիւլէ ջուր :  
4. Կէս բաղնիք :  
5. 1 1/2 այգի :  
6. Արօտ 2 ժամու ճանապարհ շրջապատով :  
7. 5 տուն վանուց գիւղին մէջ :

Աստ կ'աւարտի վանքեկից խորհրդոյս առաջին Համարատուութեան տեղեկագի-  
րը : Ինչպէս պիտի տեսնուի , ազգային վանքերը որ Ազգին ստացուածոց մէջ ամենէն  
մեծ տեղը կը բռնեն , և որ Մահմանադրութեան հաստատութենէն ի վեր առաջին ան-  
գամ կազմեալ խորհրդոյս միջոցաւ նկատողութեան առնուեցան , մեծ խնամոց կը կա-  
րօտին . և խորհուրդս կը յուսայ թէ իր նախապատրաստութիւններն պիտի օգնեն իր

յաջորտաց՝ այս մեծ խնամքը տանելու և ազգային վանքերը Ազգին օգտակար ընելու :  
 վանօրէից խորհուրդս հարկ կը համարի նաեւ ծանուցանել թէ, թէպէտ Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովոյ չըջարեալականը ժամանակին ստացած էր, բայց վերաքննութեան վերաբերեալ կարեւոր դիտողութիւն մը չ'ունենալով չպատասխանեց անոր. վասն զի, ինչպէս յայտնի է, վերաքննութեան մասին կարծիք յայտնելու համար փորձառութեան պէտք կայ. և այս փորձառութիւնն ալ թերեւս յաջորդ խորհուրդներն իրենց յարատեւութեամբ կարենան ստանալ :

Ստորագրելու է 11 Յունիս 1874

ԱՆԴՍՄՔ ՎԱՆՕՐԷԻՑ ԽՈՐՀՐԴՈՅ

ՄԱՄԱՐԷ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Արեւապետ

ԱՄԱՐՈՍԻՈՍ ՎԱՐԴ ԻՍԿԷՏՏԷՐԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴ ՓՍՓԱԶԵԱՆ


ԿԱՐԱՊԵՏ ՓՈԹԻԿԵԱՆ

ՄԿՐՏԻԶ ԽԱԶԻԿԵԱՆ

Արեւադար

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ





ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Գ/ն 5 զուրուշ

Handwritten signature or mark in blue ink.

2013

<< Ազգային գրադարան  
NL0051064

